



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՏՂԱՏՈՒ

ՇԱԹԵՐԻ

SEP 2010



ԲՈՒԾԱՐԱՆ

եհ

Ա Յ Գ Ի Բ

Ե. Բ. Գ. եհ Մ. ՓՐԻԴՈՆԵԱՆՑՆԵՐԻ

ՍԿՐԱ. ԿԱՅԱՐԱՆԻ ՄՕՏ,
ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹ.

ԹԻՖԼԻՑԻ ՆԱՅԱՆԳԻ
ԳՈՐՈՒ ԳԱԽՈՒՈՒՄ:



634.1
Պ-91



23 JUL 2013

634.1
7-91

100
10. 0



ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ


ԲՈՒԾԱՐԱՆՆԵՐ

ԵՒ

ԱՅԳԻՔ

Գ. և Մ. Փրիդոնեան եղբայրների

ընտանեկան երկաթուղիների ՄԿԸ կայարանի մաս, Թիֆլիզի նահանգի
Գորու գաւառում:



Ց Ո Ւ Ց Ա Կ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԵՒ ԹՓԻԿՆԵՐԻ



Թ Ի Ց Լ Ի Զ

ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ. ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ № 12

1904

ՔԻՐՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ Է ՀԵՏԵԻՆԵԱԼ ՊԱՐԳԵԻՆԵՐԻ

1899 թ. Ս.-Պետերբուրգի ԿԱՅՍԵՐՍԿԱՆ Ռուսական Ընկերութեան Համա-
ռուսական Յօրելեանական ցուցահանդէսում ոսկէ շքադրամի:

1900 թ. Խարկովի Այգեգործական և Տունկաբուծական Հարաւ-Ռուսական
ցուցահանդէսում Երկմոխց նախարարութեան ոսկէ շքադրամի:

1901 թ. Այգիների մշակման վերաբերեալ գործիչների համաժողովը՝ այցե-
լելով պողատու ծառերի այգիներն ու բուծարանները, իր ընդ-
հանուր ժողովում վճռեց ֆիրման պարգևատրել պատուատր վկայա-
գրով:

1901 թ. Կովկասի Գիւղատնտեսական և Արդիւնաբերական ցուցահանդիսում՝
իր մշակած զանազանակերպ ու շատ տեսակ պտուղների ընտիր
յատկութեան և զանազանակերպ մշակած բուծարանների լաւ գը-
րութեան մէջ պահպանելու համար արժանացել է պատուատր
վկայագրի ըստ ըստ աստիճանի պարգևի:

1903 թ. ԿԱՅՍԵՐՍԿԱՆ Ռուսական Պտղաբուծական Ընկերութեան կազմակեր-
պած Ս.-Պետերբուրգի տօնավաճառ-ցուցահանդէսում միջակ ոսկէ
շքադրամի:

1903 թ. Գազրինի այգիների մշակման ցուցահանդէսում ոսկէ մեծ շքադրամի:

Дозволено цензурою. Тифлисъ, 17 Августа 1904 г.



37188-62



Պտղաբուծութեան վերաբերեալ յայտնի գործիչ և «Համառօտ ուղումն պտղատու ծառերի» գրքի հեղինակ, իշխան Ս. Ե. Գաղարինի Օկնինի տընտեսութեան բուծարանների և պտղատու այգիների կառավարիչ—Ի. Ուսիկովը իր՝ Սարկովի այգեգործական և տունկաբուծական 1900 թ. Հարաւ-ուսական ցուցանանդէս» յօդուածում, որ լոյս տեսաւ «Պտղաբուծութիւն» ամսագրի մէջ, գրում է.

«Կովկասը ներկայացնում էր միայն մի հատ բայց մեծ ու հիանալի էքստոնատ^{*)} եւրոպական ընտիր տեսակների շատ խոշոր ու գեղեցիկ պտուղներով և յնարաւոր անուններով: Այդ էքսպոնատը պատկանում էր Փրիզոնեան եղբայրներին, որոնք առևտրական բուծարան և պտղատու այգիներ ունեն թիֆլիզի նահանգի Գորու գաւառում: Յուշադրուած պտուղների միջանի տեսակները՝ իրանց սիրուն տեսքով ու խոշորութեամբ տեսնողների զարմանքըն էին շարժում: Բակլայի և արքայախնձորի (անանաս) այգիների պտուղների դեռ ոչ մի տեղ չեմ պատահած: Լաւ էին նոյնպէս Լանարէրզի բենէտը (խնձոր), Ոսկէ-Պարմէնը, Կանադեան և Օբերդիլի բենէտները, Դանցիզի Կալիլին ու Բաւմանի բենէտը: Ընդամէնը 35 տեսակ խնձոր կար, 15 տեսակ սանձ, 6 տեսակ ընկոյզ, 2 տեսակ զկեռ, 3 տեսակ սալոր: Լաւ էին ինչպէս տանձերը, այնպէս էլ խնձորները: Իսկ դրանց մէջ ամենալաւերը՝ Կիւրէ, Դիւշէս դ'Անգուլէմ, Կլերթօ, Ուրբանիստկա և Բերէ Նապօլէօն կոչուածներն էին»:


«Պէտք է ուշադրութիւն դարձնել այդ էքսպոնատի անուանացանկի ճշտութեան վրայ, որ մի շատ լաւ օրինակ է. ուստի և ցանկալի է որ մեր բազմաթիւ բուծարանները դրան հետեւին»:

Մեծ նշանակութիւն ունի ուղիղ անունների իմանալը, վաճաղի այգի տնկողը միջանի տարուց յետոյ կարող է՝ առանց սխալուելու պատուաստներ անել ուզած տեսակից:


*) Յուշանդէսում իր ունեցած տպրանքը, իր ձեռագործը ի ցոյց դնող:




1901 Կովկ. յօբել. ցուցանանդէսում դրած սրահակը (պավիլիօն) ներքուստ:



Սղը, Գ. և Մ. Փրիզոնեանների նոյն սրահակը արտաքուստ:



Գ. և Մ. Փրիդոնեան եղբայրների այգու պտղաբաղը:



Գ. և Մ. Փրիդոնեան եղբայրների ներքևի այգու մեղրանոցը:

ԲՈՒԾԱՐԱՆԸ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է՛ ՏՈՒՆԿԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՏՈՐԵՒ ԸՌԱՋ ԲԵՐՈՒՄՓ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

ՏՈՒՆԿԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Յուցակում նշանակուած գներով տունկերը արվում են միմիայն իր տեղում— բուծարանում:

2. Ստացուած պատուէրները կատարվում են հերթով: Բուծարանը իրան է վերադարձում խնդրած տեսակի պահասութեան դէպքում պատուէրը լրացնել մի ուրիշ յարմար տեսակով, եթէ միայն այդ առիթով ոչինչ չի լինել ասուած պատուէրի մէջ:

Պարտք ենք համարում նախագգուշացնել պ. պ. պատուէր տուողներին, որ շնորհիւ անսպասելի շատ պահանջի՝ քանիմի տեսակների պաշարը կարող է հատած լինել: Ուստի ուրիշը ցանկանում են որ իրանց պատուէրները առանց սրեւէ փոփոխութեան կատարուեն, այդպիսիներին խորհուրդ ենք տալիս՝ օրով-առաջ անել իրանց պահանջները:

Ձե-ստացած (ճիւղերով — КРОНИСТЫЙ) ծառերը կարող են սպառուած լինել, ուստի բուծարանը խնդրում է պ. պ. պատուէր տուողներին՝ իրանց պատուէրների մէջ միշտ յիշատակեն, թէ իրանք չեն կամենում ձե-ստացածների փոխարէն միամեայ ծառիկներ ունենալ, հակառակ դէպքում, եթէ պէտք լինի, ձե-ստացածներին կը փոխարինեն միամեայ ծառիկները:

3. Բոլոր պատուէրները ուղարկվում է պ. պ. պատուէր տուողների հաշուով և պատասխանատուութեամբ: Պատուէրը ճանապարհին ուշանալու և կամ կորչելու համար բուծարանը իրան պատասխանատու չի համարում:

4. Բուծարանից տունկեր տալը կատարվում է կանխիկ վճարով: Կարելի է պատուէրներ տալ նաև վերագիր վճարով, բայց այդ դէպքում պէտք է պատուէրի հետ ուղարկել նաև խնդրածի կէս-գինը: Պատուէր տալիս տունկի արժէքին պէտք է կցել նաև կապոցն ամրացնելու համար: Սակայն կապոցն ամրացնելու արժէքը ճշտութեամբ որոշելը դժուար է, յամենայն դէպս պատուէր տուողից կ'առնուի միմիայն բուծարանի՝ այդ առիթով արած ծախսերը, որոնք՝ չափի համեմատ տատանվում են 50 կոպէկից մինչև 3 կամ աւելի ուրբու միջև մի կապոցի համար: Բուծարանի վարչութիւնը ամեն միջոց գործ է դնում, որ կապոցն ամենայն խնամքով ամրացնուի և ապա թէ ճանապարհուի:

5. Պատուէրների ստացման համար իմաց է արվում պատուիրողներին բաց նամակով:

6. Երբ պ. պ. գնողները անձամբ են ընտրում տունկերը, այդ դէպքում պարտաւորական չեն ներկայ ցուցակում նշանակուած գները, որոնք կարող են բարձրանալ՝ նայած տունկի ուժին ու գեղեցկութեանը:

7. Այն անձինք, որոնք կամենում են անձամբ վերցնել տունկերը բուծարանից, իրանց գալու օրուայ մասին պէտք է առաջուց յայտնեն:

8. Պատուիրողը պէտք է պարզ և որոշակի գրի իր հասցէն՝ հետն էլ ցոյց տալով փօստի կամ երկաթուղու այն ամենամօտիկ կայարանը, ուր որ պէտք է ուղարկուի ապրանքի ցուցակի պատճէնը (дубликатъ накладной):

9. Պպ. գնորդներին խնդրում ենք՝ տեղեկացնել մեզ թէ ինչ կերպով պէտք է ուղարկուի բեռը, այսինքն՝ երկաթուղով պէտք է ճամբու դնել, թէ՞ որևէ փոխադրող գրասենեակի միջոցով, և ո՞րն է այդ:

10. Տուճակերի ուղարկելն սկսվում է մօտաւորապէս հոկտեմբերի վերջից, իսկ դարնանը՝ հէնց որ հողը հալ է ընկնում—հալհլոցն սկսվում է:

11. Եթէ տուճակերի բեռնահակն ստացվում է սաստիկ ցուրտ—սառնամանիք եղանակին, խորհուրդ ենք տալիս՝ չքանալ հակը, այլ ստանալուն պէս տանել-գետնից մի հով տեղ, որ պէտք է ազատ լինի սառնամանիքից, այն է՝ ներքնայարկում, կամ այլ յարմար տեղ և բաց անել միայն այն-ժամանակ, երբ կապոցը կրակի հալ ընկնել (բայց ներքնայարկ տանելուց անպատճառ 7—10 օր յետոյ): Եթէ տուճակերն ստացուեն թառամած տեսքով, պէտք է տուճակերը ծածկել մամուռով կամ ծղնօտով և շուտ-շուտ ջրով ցրցամ տալ—ջուր ցրցնելն վրան, մինչև որ տուճակերը հարթուեն—գրաստուեն: Կապոցը բանալուց յետոյ այդպիսի ծառերը պէտք է մի-երկու օրուգիշեր, իսկ եթէ հարկը պահանջի նաև աւելի, ջրի մէջ դնել և միայն այդ անելուց յետոյ տնկել իրանց համար որոշած տեղերում:

12. Այժմեան արտօնեալ սակագնի համաձայն ծառատուճակերը տարվում են միայն ճեպընթաց—արագընթաց գնացքներով, բայց վարձը վերցնում են յամբընթացների համեմատ, այն է՝ մի վերստի համար փթին 1/24 կոպէկ, ուստի և թանգ չի նստում նոյնիսկ շատ հեռու տեղեր ծառեր ուղարկելը:

13. Պպ. պատուէր տուճակերի կողմից արուած ամեն տեսակ դիտողութիւն՝ ուրախութեամբ կ'ընդունուի բուծարանի կողմից: Տուճակեր ուղարկելիս պատահած սխալները, եթէ իմաց արուի իր ժամանակին, կարելի կը լինի՝ հնար եղածին չափ ուղղել այդ սխալները:

14. Երկու կողմի հեշտութեան համար խնդրում են՝ պատուէր տալիս անպատճառ նշանակել. նախ՝ որևէ բաժանմունքից ուղածի ընդհանուր վերնագիրը (օրինակ՝ տեղական, ամերիկական, ամոսն, աշնան տեսակներ կայն), ապա №-ն ու անունը՝ թէ հայերէն և թէ ֆրանսէրէն:

Խնդրում ենք թէ՛ դրամական և թէ՛ ապահովուած թղթակցութիւնները ուղարկել այս հասցէով՝

Тифлисъ, М. Е. ПРИДОНОВУ, Сергіевская, 11.

Կամ՝

Въ гор. Гори (Тифлисской губ.) г. управляющему плодовыми питомниками Бр. ПРИДОНОВЫХЪ.

Հասարակ թղթակցութեան հասցէն՝


Ст. СКРА Закавказской железной дороги

Плодовые сады и питомники Бр. Г. и М. ПРИДОНОВЫХЪ.

Հեռագրի հասցէն՝

Тифлисъ. Гелогани.

Կամ՝ Скра. Питомники Придоновыхъ.



Պտղատու այգու ընդհանուր տեսքը:

մեծ այգին գտնվում է կիրճի սկզբում՝ բուծարանից երկու վերստ դէնը: Բուծարանի նպատակն է՝ նպաստել, որ երկրի մէջ տարածուի միմիայն ամենաբնտիր տեսակի տուճակեր: Որովհետև մեզանում—Անդրկովկասում և առհասարակ հարավային Ռուսաստանում ամենալաւ ձևը ճանաչուած է 1 1/2 արշին բարձրութեամբ կիսաբունը, հէնց գրա համար էլ մեր բուծարանում եղած բոլոր պտղատու ծառերը մեծացնվում են այդ ձևով: Որի միջոցին առանձին ուշադրութիւն է դարձնվում կանոնաւոր ձև-տալուն (ճիւղերի ուղղութեան) և լաւ արմատներ զարգացնելու կերպին: Բուծարաններում ծառեր են մշակվում նաև առանց հողը պարարտացնելու եւ ոռոգելու—ջրելու:

Բազմացնելու համար ընտրվում են այնպիսի տեսակները, որոնք արդէն պտուղ են լինում տուած մեր ընտիր տեսակների այգիներում: Իսկ պատուաստի կամ ակնատակելու

համար մատնե-րը վերցնում են միմիայն մայր-ծառերից: Հնար եղածի չափ այն տեսակներն են ըազ մացնվում, որոնք արդիւնաբերական նշանակու թիւն ունեն եւ համոզուած ենք թէ անունները ճիշտ են:

Որպէսզի փորձը աւելի յաջող լինի, բուծարանը ամեն տարի նո-



Բուծարանի երկու տարեկան ծառերը:

Պտղատու այգիքնու բուծարանները գտնվում են Անդրկովկասեան երկաթուղու Սկրա կայարանից մի վերստ դէնը՝ Թիֆլիզի նահանգի Գօրու գաւառում: Բուծարանները և տեսակների այգու մի մասը գետեղուած են երկաթուղու գծի մօտ. իսկ տեսակների



Բաժարանի երեք տարեկան ծառերը:

բանոր՝ դեռ ևս ընդհանուր գործա-
ծութեան մէջ չմտած կամ մեղանում
— կովկասում քիչ փորձուած տե-
սակների ծառեր է տնկում և կամ
մայր-ծառերից պատուաստում, որ-
պէսզի սեպհական փորձով պարզի
այս կամ այն տեսակի պիտանիու-
թիւնը և ապա թէ վճուի առաջար-
կելու այդ տեսակները մեր երկրի
համար: Ներկայ ցուցակում առա-
ջարկուած տեսակների հետ այգի-
գործութեամբ պարապօղները կա-
րող են ծանօթանալ մեր այգիներ-
ում:

Մեր պտղաբուծութեան զար-
գացման համակրողներին խընդ-
րում ենք հաղորդել մեզ իրանց
կարծիքն ու նկատողութիւնները՝
բռննահակը կապելու ծեփ, բու-
ծարանից ստացած ծառերի յատ-
կութեան և թէ նրանց աճե-
ցողութեան մասին: Ամեն մի նը-
կատողութիւն՝ կ'ընդունուի մեծ
շնորհակալութեամբ:



Միքանի խօսք պտղատու այգիներ գցելու և ծառեր տնկելու մասին

Ցանկանալով գոնէ փոքր չափով այն սխալների առաջն առնել, որ կարող են պատահել պտղատու այգիներ գցելիս, հարկաւոր ենք համարում շատ համառօտակի տեղեկութիւններ տալ այստեղ՝ պտղատու այգիներ գցելու և ծառեր տնկելու վերաբերմամբ: Դրանք են.

1. Այգու համար պէտք է յարմար տեղ ընտրել:
2. Այգ ընտրած տեղին համապատասխան տեսակների ընտրողականու-
թիւն և խիստ ընտրութիւն պէտք է տնկել:
3. Այգտեղ պէտք է տնկել բուծարանում կանոնաւորապէս սնուցած —
մեծացրած առողջ ծառեր:
4. Պէտք է հողը պատրաստել:
5. Պէտք է կանոնաւոր տնկել:
6. Այգ ամենը կատարելուց յետոյ պէտք է սկսել լաւ խնամք տանել,
բայց՝ որ գլխաւորն է, անհրաժեշտ է սիրով վերաբերմունք ունենալ գէպի
գործը: Որովհետեւ այդ վերին աստիճանի պարզ երեւացող հարցերի կանոնաւոր
գործադրելուցն է կախուած ամբողջովին ապագայ պտղատու այգու յաջողու-
թիւնը:

Մեզանում պտղատու այգի գցելիս դժբաղդաբար շատ քիչ ուշադրութիւն
են գործնում վերոյիշեալ պահանջների վրայ և երբ արդէն ուշ է լինում
սխալներն ու զանցառութիւններն ուղղելը, նոր սկսում են զանգատուել, թէ
այգիները քիչ արդիւնք են տալիս: Ո՛չ մի բան չպէտք է վաղուան թողնել
և զանցառութեան տալ, այլ ամեն բան իր ժամանակին պէտք է կատարել
և այն՝ ամենայն ճշտութեամբ:

Երբ մասնաւոր մարդիկ՝ իրանց անձնական բաւականութեան համար,
որպէս այգեսէրներ, փոքրիկ պտղատու այգի են գցում, կարող են տնկել՝
ինչ տեսակի ծառ որ կամենան, այլևս ուշադրութիւն չդարձնելով, թէ իրանց
տնկած ծառի տեսակը որքան յարմար է պահանջած պայմաններին: Ի՛նչ
ասել կ'ուզի որ դրանք ևս այն հաշուով են ընտրում տեսակները, որ տար-
ուայ զանազան ժամանակ ուղած պտուղներն ստանան:

Մինչդեռ երբ այգի է գցվում եկամուտ ստանալու նպատակով, այսինքն
կամենում են արդիւնաբերական այգի ունենալ, տեսակների ու տնկուելիք
ծառերի ընտրութեան վերաբերմամբ շատ զգոյշ ու հեռատես պէտք է լինել:
Նոր այգի գցել ուզողը եթէ լաւ տեղեակ չէ, թէ ինչպէս պէտք է ընտրել
տեսակները, խորհուրդ ենք տալիս դիմել այնպիսի անձանց, որոնք ձեռնհաս
են աւելի կամ պակաս անսխալ ցուցումներ ու խորհուրդներ տալ իրանց

գլիծ ստանալու համար պէտք է ցցեր դնել: Իսկ երբ գծի ուղղութիւնը որոշ-վում է, բահի օգնութեամբ կա պէտք է գլիծ բանալ հողի վրայ: Այդ անելուց յետոյ՝ անցկացրած գծի որևէ մի ծայրից դրվում է եռանկիւնիկը (տես նկար 1): Այդ եռանկիւնիկի երեք անկիւններում, ինչպէս երևում է նկարից, երեք ցից է դրվում, որոնք ցոյց են տալիս անկուած երեք ծառերի տեղը: Երբ այդ երեք ցիցը վէր են տալիս-պրծնում, երեքանկիւնիկը առաջ են շարժում և դնում նոր երկու ցցիկներ, որից յետոյ դարձեալ նոյն ձևով առաջ են շարժում եռանկիւնիկը: Երբ արդէն վերջանում է և որոշվում երկրորդ կարգը, եռանկիւնիկը փոխադրվում է երկրորդ կարգի վրայ: Միևնոյն կերպով էլ որոշվում է երրորդ կարգը, ապա չորրորդը և այգպէս շարունակ, մինչև որ որոշվում են ու պրծնում բոլոր կարգերը: Եռանկիւնիկի ցոյց տուած տեղերում վէր տուած ցցերը՝ ամեն ուղղութեամբ պէտք է բաժանուած լինեն կանոնաւոր կերպով: Իսկ այն տեղի վրայ, որ բաւական թեք է, որպէսզի կարգերը իրար չմօտենան, ծառերը անկելիս՝ ցցերի փոխարէն եռանկիւնիկի կողմերը պէտք է դնել հողի վրայ և վերի մասը բարձրացնել հորիզոնական դրութեամբ եռանկիւնիկին, այդ միջոցին տեղը նշանակելու համար ցիցը դրվում է որպէս կապարարար:

Որպէսզի փոսեր փորելիս կարգերի կանոնաւորութիւնը պահպանուի, աւելի լաւ է որ ցցերը չհանուեն, այլ քանի փորուի, այնքան խորը վէր տալ և վերջիվերջոյ ամրացնել վերջին փորուածքի յատակի վրայ: Կարող է պատահել, որ ցցերը հեշտութեամբ կորչեն և ծառեր անկելիս հարկ լինի նորից որոնել փոսի կենդրոնը, ուր դրուած էին ցցերը: Այդ աշխատանքը թեթևացնելու համար պէտք է բոլոր կարգերի ծայրերին մի-մի ստուգիչ ցից դնել:

Ահա այդ ստուգիչ ցցերով՝ որոնցով խաչաձև կտրվում են կարգերը, կարելի է հեշտութեամբ գտնել փոսերի կենդրոնները՝ կորած ցցերի տեղը նորերը գտնելու համար:

Թէ որքան տարածութիւն պէտք է յատկացնել կարգերի կամ կարգերում եղած ծառերի համար, որոշակի ասել դժուար է: Այդ ամենը կախուած է՝ տեսակներից, որոնք պէտք է անկուեն, գնած ծառերի ձևից, վայրի կիսածառի աճման ոյժից, որին պատուաստած է ուղած ծառի տեսակը, և տեղական կլիմայական ու հողի յատկութիւններից. բայց առհասարակ պէտք է կանոն ընդունել, որ ինձորենիներն ու տանձենիները, որոնք պատաստվում են վայրի կոճղերի վրայ, չպէտք է խիտ անկուած լինեն, այլ ամեն կողմից 3 սաժէն հեռու-հեռու իրարից: Այդ կերպով մի գետնատին կամ մօտ 1 1/4-ական օրավար հողի վրայ կարելի է լինում 260 ծառ անկել: Տանձենիները պէտք է իրարից հեռու լինեն 2 1/2 սաժէն, սալորի, բալի, կեռասի ու ծիրանի ծառերը՝ 2—3 սաժէն. գեղձի ու սերկիլի ծառերը՝ 2 սաժէն: Իսկ սերկիլի ծառին պատուաստած տանձի ու խնձորի ծառերի, ինչպէս նաև գրախտախնձորենու վրայ պատուաստածների համար 1—1 1/2 սաժէն տարածութիւն էլ բաւական է:

Սակայն արհեստական կերպով ձև-ստացած ծառերի համար ճշտութեամբ որոշել՝ թէ որքան պէտք է լինի նրանց միջև լինելիք տարածութիւնը, անկարելի է: Ամեն բան կախուած է ծառի տեսակից և այգու մէջ եղած ծառերի՝ միմեանցից ինչ հեռաւորութեամբ գետեղուած լինելուց: Իսկ ընդհանրապէս այդ տարածութիւնը ստատանվում է 1 1/2 արշինի՝ լարածև ուղղահայեացների համար, և 1—1 1/2 և աւելի սաժէնի միջև՝ արմաւենու ձևի և հորիզոնական լարածների համար:

Հէնց-որ ցցերով որոշում են այն տեղերը, ուր պէտք է անկուեն ծառերը, սկսում են փոսեր փորել: Հողը որքան աժուր է, այնքան էլ վաղ պէտք է սկսել այդ աշխատանքը: Ընդհանրապէս պէտք է կանոն ընդունել, որ փոսերը պէտք է փորուեն անկելուց՝ առնուադն 3—4 ամիս առաջ: Գարնանը անկուելիք ծառերի համար փոսերը պէտք է փորուած լինեն նախընթաց տարուայ աշնանը, որպէսզի հողը լաւ ցրտահարուի ձմեռը:

Իսկ ինչ վերաբերում է փոսի մեծութեանը, պէտք է ասած՝ որ ինչքան լայն լինի փոսը, այնքան էլ լաւ կը լինի, որովհետև արմատները կարող են աճել ու տարածուել նաև լայնութեամբ: Ընդունուած է՝ փոսերը փորել 2 արշին լայն և մի արշինաչափ էլ խորը: Բալի և գեղձի ծառերի համար կարելի է բաւականանալ աւելի քիչ խորութեան փոսերով:

Իսկ չափից գուրս չոր տեղերում փոսի խորութիւնը 1 1/2 արշինից աւելի չպէտք է լինի: Ո՛րքան հողը աղքատ է և նրա շերտը բարակ, որքան ստորերկրեայ շերտը վատ, այնքան ևս փոսերը պէտք է փորել աւելի լայն և պակաս խորը:

Փոսեր փորելիս հողի վերին շերտը, որ առաջուց մշակուած է և ուրեմն աւելի հարուստ բուսահողով, պէտք է ածել մի կողմը, իսկ ներքին շերտն էլ միւս կողմը, ինչպէս ցոյց է տալիս 2-րդ նկարը: Այդ նրա համար է, որ լաւ հողը գործածուի անկելիք ծառերի արմատի տակն ածելու, իսկ ներքին շերտը վերելից ածելու, որ օդի և խոնաւութեան ազդեցութիւնից նոյնպէս լաւանում է ժամանակով:

Այնտեղ, ուր հողը վատ է, լաւ է որ լաւ հողով խառնուի. օրինակ՝ այրուած փէյին, եթէ հարկ լինի՝ նոյնիսկ աւազ և կամ արուեստականապէս պարարտացնել, այն է՝ խառնել ոսկորի փոշի, փայտի մոխիր և այլն:

Ծառերը անկելուց մի երեք շաբաթ առաջ փոսի մէջ 2 վերջուկ խորութեամբ ցից են վէր տալիս, որին պէտք է յետոյ կապուի ծառը: Ցցերը վէր տալիս— ցցելիս պէտք է ուշադրութիւն դարձնել, որ նրանք ամեն ուղղութեամբ ուղիղ կարգը կազմեն: Ցցերը պէտք է կոկիլի—հարթ և ուղիղ լինեն *):

Ցցերը դնելով փոսի մէջ, երկու երրորդական (2/3) խորութեամբ հող են ածում: Երբ հողը բաւականաչափ նստած է լինում, այն-ժամանակ սկսում են անկել ծառիկները, որի միջոցին անկելուց առաջ ցցի մօտ փխրուն, լաւ

*) Շատ օգտակար է, նոյնիսկ անհրաժեշտ, որ ցցի այն մասը, որ պէտք է հողում լինի, մի արշինաչափ 3 շաբաթ 3 0/0 պղնձի արջասպի լուծուածքի մէջ դրուի: Այդ բանից ցցերը աւելի դիմացկուն կը դառնան և թէ արգելք կը լինեն զանազան վնասակար սունկերի զարգանալուն, որոնք հեշտութեամբ վարակում են անկուած ծառի արմատները:

հողից կոնուսածն կիտուկ են անում—թմբիկ են շինում (տես նկար 3) և ապա թէ վրան նստացնում անկելիք ծառիկը:

Կրկնում ենք՝ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել ծառիկների ընտրութեան վրայ: Երկասեայ և երեք-ամեայ ծառիկները աւելի լաւ են դիմանում բոլոր կատարուելիք գործողութիւններին, որոնք տեղի են ունենում անկելիս, այն է՝ հողից—իր նախկին տեղից հանելուն, արմատները կտրուտելուն և այլն, ուստի և խորհուրդ ենք տալիս նոր այգի գցելու համար վերցնել ըստ կարելոյն այդ հասակի խնձորի, տանձի, բալի, կեռասի ու սերկելի ծառիկներ: Ծառիկները պէտք է աճած լինեն ուղիղ, ուժեղ բուն ունենան, պէտք է կանոնաւոր ձև-ստացած ու զարգացած արմատներով լինեն: Անդրըկովկասի համար ամենից լաւը միջին տեսակի բուն ունեցող ծառիկներն են:

Ծառիկները անկելիս պէտք է միտը պահել, որ բուծարանում հողի մէջ եղածից աւելի խորը չպէտք է թաղել, ընդհակառակը՝ ծառի պարանոցը միշտ պէտք է բարձր մնայ երկրի մակերևոյթից. սրովհետև հողը փոսերի մէջ նստելով—վայր իջնելով, ներքև կը գնայ նաև ծառիկը: Իսկ եթէ շատ է խորը թաղվում, անխտաստիւն է լինում՝ ծառերի հիւանդանալը: Նախքան ծառիկը անկելը, պէտք է ուշադրութեամբ աչքի անցնել նրա արմատները, որոնցից բոլոր մեռածներն ու կտրատուածները անպատճառ պէտք է տակից կտրուեն, բայց այնպէս՝ որ կտրուածքը գէպի ներքև լինի ուղղուած: Ծառ երկար արմատները պէտք է միքիչ կարճացնել, իսկ բոլոր մանրիկ արմատներին ձեռք չտալ, թողնել անփաստ: Արմատն այդպէս քշելուց—հարկաւոր համարուածները կտրտելուց յետոյ լաւ կը լինի, եթէ ծառիկը արմատի կողմից ջրոտ փոսի մէջ գնուի և մնայ միքանի ժամ, որպէսզի ծառիկի արմատ-թերիկները ջրակալեն: Յետոյ հանել և արմատները կրկին ջրի մէջ 6 ժամ լաւ թրջոց գնելուց յետոյ նորից հանել ու թաթախել թանձր կաւի ու տաւարի թրիքի մէջ, որպէսզի թէ արմատները պաշտպանուեն օդի անմիջական ազդեցութիւնից և թէ հողը ամուր կաշի արմատներին, որ առանձնապէս մեծ նշանակութիւն ունի, եթէ գարնանն է անկվում: Ուրեմն քշած ծառը պէտք է այնպէս անկել, որ նրա պարանոցը 1 կամ 2 վերջոկ բարձր մնայ երկրի մակերևոյթից, և որպէսզի այդ բանում սխալ չպատահի, փոսի լայնութեամբ ուղիղ փայտ են գցում (տես նկար 4), որ ցոյց տայ երկրի մակերևոյթը: Նկար 4-րդը նաև ցոյց է տալիս, որ ծառ անկելու գործողութիւնը անպատճառ երկու հոգով պէտք է կատարուի, որոնցից մինը բնում է—պահում է ծառը ուղղահայեաց դրութեամբ, իսկ միւսը ուղղում է արմատները և հողով էլ ծածկում: Ծառը անկելիս վերին շերտի լաւ հողը, որ մի կողմ էր ածուած, և կամ արուեստականապէս պարարտացրածը պէտք է ձեռքերով բաժանել արմատների մէջ և նրանց արանքները—մէջերը լցնել այնպէս, որ դատարկ տեղ չմնայ:

Տնկելու միջոցին փոսի շրջանի հողը, որին գեռ չեն հասել անկած ծառիկի արմատները, պէտք է ժամանակ-առժամանակ ոտքով տփափել, որպէսզի ծառիկի շատ նստելու առաջն առնուի. բայց երբ արդէն հասած են լինում

արմատին, այդ բանը չի կարելի անել, եթէ ոչ արմատները կարող են պոկուել: Ինչպէս վերև ասացինք՝ ծառիկը այնպէս է նստում հողի մէջ, որ արմատին մօտ եղած պարանոցը 1—2 վերջոկ բարձր է մնում երկրի մակերևոյթից: Ահա այդ պատճառով է ծառիկի անկելը կատարվում հողակոյտերով—կիտուկներ անելով: Տնկելիս երբ հողակոյտը—կիտուկը—թմբիկը փոսի մէջ լաւ նստի, իսկ նրա հետ ևս կը նստի նաև ծառիկը, այն-ժամանակ ընի պարանոցը կրկին կը գտնուի այն տեղում, ինչ տեղ որ էր բուծարանում աճելիս, այսինքն երկրի մակերևոյթի վրայ:

Մի-երկու օրից յետոյ անկած ծառիկը կապում են ցցին, բայց ոչ-ամուր որպէսզի ծառիկը ազատ կերպով կարողանայ նստել վայր իջնող հողի հետ: Յիցը կտրում են ճիւղերից երկու վերջոկ ցածր (տես նկար 5):

Երբ նկատուի որ ծառն ու հողը այլևս դադարել են նստելուց, պէտք է վերջնականապէս կապել սրբած ճիւղերով, շորի ծլանգներով—կտրտանքներով և կամ՝ որ աւելի լաւ է, հասարակ մահուղի եղերքներով. բայց կապել այնպէս, որ ծառիկի ու ցցի մէջ այդ կապը այսպիսի մի ձև ստանայ՝ ∞:

Այդպիսի կապը չի թողնում որ կապուած ծառը շփուի—քսուի ցցին, իսկ այդ անհրաժեշտ է, որ այդպէս լինի, որպէսզի ծառիկը ազատ մնայ պլուկուելուց—վիրաւորուելուց, որ կարող է պատճառ դառնալ ծառի վտանգաւոր հիւանդանալուն սարսափանով—խլիղով (ракъ) կամ դրա այրուած-զաւոր հիւանդանալուն սարսափանով—խլիղով (դարման), խտտով և կամ բոլորով փուչ-փուչ հողը ծածկել հին յարդով (դարման), խտտով և կամ բոլորով վին այրուած-պրծած փէյնով: Տնկելը վերջացնելուց յետոյ անհրաժեշտ է կտրտել ձև-ստացած ոտտիկները, որ առանձնապէս նշանակութիւն ունի մեր կարտել ձև-ստացած ոտտիկները կտրտում են երկարութեան երկրորդ կլիմայում: Ձև-ստացած ոտտիկները կտրտում են երկարութեան երկու երրորդականը ($\frac{2}{3}$), կամ աւելի ճիշտն ասած՝ թողնվում է երկարութեան մի երրորդ ($\frac{1}{3}$) կամ մի չորրորդ ($\frac{1}{4}$) մասը (տես նկար 6), այնպէս որ ցած գետեղուած—գտնուած ոտտիկները կտրվում են երկու-երեք աչք աւելի երկար վերևիներէից: Իսկ մէջտեղի գլխաւոր ոտտիկը աւելի երկար է թողնվում կողքիններից. դրա վրայ թողնվում է 10 աչք: Միշտ պէտք է կտրել արտաքին աչքի վրայից և վերքը—կտրածը խնամքով ձեփել:

Անհրաժեշտ է կրաշուր քսել անկած ծառերին: Կրաշորի հետ պէտք է խառնած լինի միքիչ կապոյտ քար—պղնձի արջասպ: Այդ գործողութիւնը պէտք է կատարել տարեկան երկու անգամ, այն է՝ գարնանը և աշնանը: Այդ նպատակի համար լուծուածքը այնպէս են պատրաստում. վերցնում են 8 դոյլ (վեգրօ) ջուր, մէջը լուծում 7 $\frac{1}{2}$ գրվանքայ չհանգած կիր, իսկ մի ուրիշ ամանի մէջ էլ տաք ջրում լուծում են 7 $\frac{1}{2}$ գրվանքայ պղնձի արջասպ, որի վրայ և ածում են կրաշուրը: Բայց անպատճառ կրաշուրը պէտք է ածել պղնձի արջասպի վրայ և ոչ ընդհակառակը:

Մեզ մօտ—Անդրկովկասում չափազանց օգտակար է հէնց առաջին տարում նոր անկած ծառերը փաթաթել ճիւղոտով կամ մամուռով: Ծառի ընի

այդպէս փաթաթելը՝ թէ պաշտպանում է անկած ծառը այրող արեւից ու խոր-
շակ քամուց և թէ շատ ձախորդութիւններից:

Տնկելուց յետոյ ամբողջ ամառուան ընթացքում ամենայն եռանդով պէտք է պոկել-հեռացնել ծառի մօտից անպէտք բոյսերը, ծառի շուրջը եղած հողը փուչ-փուչացնել, անկային հիւանդութիւններից բժշկել և ոչնչացնել զանազան փխս-տուղիներին, իսկ եթէ հարկաւորուի, նոյն կերպ վարուել նաև սուղելու — ջրելու վերաբերմամբ:

Այն տեղերում, ուր նապաստակներ կան, ձմեռը պէտք է ծառերը փշապատել, ինչպէս ցոյց է տալիս նկար 8-րդը:

Իսկ անսխալ իմանալու համար թէ ինչ տեսակի ծառեր են անկուած այգում և ինչ կարգով, անհրաժեշտ է բոլոր անկած ծառերի անունները մի-տա-մի նշանակել մատենի մէջ. մի բան՝ որ առանձին դժուարութիւն չի պահանջում, բայց որ յետոյ ահագին ծառայութիւն կը մատուցանի, երբ հար-կաւորուի՝ պատուաստի համար մատներ վերցնել ուղած ծառից:

Ահա այդ էր համառոտակի այն ամենը, ինչ-որ անհրաժեշտ է անպատճառ ինկատի ունենալ ծառեր անկելիս: Սակայն ծառեր անկելը բաւական չէ և չպէտք է ձեռքներս ծալած նստենք ու արդիւնքի սպասենք, այլ անհրաժեշտ է շարունակ ու անդադար խնամք տանել ծառեր անկելուց յետոյ էլ: Իսկ թէ ինչպէս պէտք է խնամք տանել թէ ծառերի և թէ առհասարակ այգու վրայ, խորհուրդ կը տանք զիմեկ մասնագէտների գրուածքներին: Դրանք են.

- 1) Н. И. Кичуновъ. Руководство по веденію плодового сада и питомника. Изданіе Н. В. Петрова въ Харьковѣ.
- 2) Э. К. Клаусенъ. Краткій учебникъ по плодоводству ц. 30 к.
- 3) А. С. Гребницкій. Уходъ за плодовымъ садомъ ц. 1 р. 25 к.
- 4) Руководсво къ плодоводству для практиковъ по Гоше. цѣна 12 руб.
- 5) И. П. Усиковъ. Краткая помология въ описаніяхъ и рисункахъ для русскихъ плодоводовъ къ выбору лучшихъ сортовъ пло- довыхъ деревьевъ и ягодныхъ кустовъ для доходныхъ насажденій.
- 6) В. В. Пашкевичъ. Учебникъ садоводства для низшихъ школъ садоводства.

Իսկ ամեն մի պտղաբուծութեամբ պարապողին մեծ ծառայութիւն կ'անի՝ ընտիր և ոչ-թանկ «Плодоводство» ամսագիրը, որ կայսերական ուսա-կան Պտղաբուծութեան Ընկերութեան օրգանն է, տարեկան զինը 2 ուրբի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը. —С.-Петербургъ, Чернышевъ переулочъ, № 16.

Վերջիշեալ գրքերի մեծ մասը կարելի է ստանալ Թիֆլիզի կովկասեան ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Գիւղատնտեսական Ընկերութեան միջոցով:

ԽՆՉՈՐԵՆԻՔ

ԱԿՆԱՏԱԿՈՇՆԵՐ ԿՍՄ ՊԱՏՈՒՍԱՏՆԵՐ ՎԱՅՐԻ ԽՆՉՈՐԵՆՈՒ ՎՐԱՅ

Դեռ ձեւ-չստացած (առանց միւղերի) տարեկանների հատը 30 կ. հարիւր 25 ո.
Չեւ-ստացած —ձԻՒՂԵՐՈՎ, երկու տարեկանների հատը 40 կ. հարիւրը 35 ո.
» երեք տարեկանների հատը 45 կ. հարիւրը 40 ո.

Ա մ ո ա ն տ ե ս ա կ ն ե ր

№ 32 Ամարային դեղձամման կարմիր խնձոր. Sommerapfel Pfirsichrother. Յունիս—օգոստոս: Որպէս ամառուայ ծախու պտուղներից մինը, արժէ բազմացնել: Պտուղը միջին մեծութեան է և սիրուն: Ծառը շատ չի մեծանում, բայց շուտ է սկսում պտուղ տալ ու հողի վերաբերմամբ էլ պահանջկոտ չէ:

№ 49. Հաշտարխանի սպիտակ խնձոր.—Pomme d'Astracan blanche. Weisser Astrakan. Պտուղը միջին մեծութեան է, քնքուշ և հիւթալից: Չպէտք է թոյլ տալ որ պտուղը հասնի ծառի վրայ, եթէ ոչ՝ կը դառնան ալիւրանման: Եթէ իր ժամանակին քաղուի, կարելի է միքանի շարաթ պահել: Հասնում է յունիսի վերջին և յուլիսի սկզբ-րին: Ծառը շատ զիմացկուն է, հողի վերաբերմամբ էլ պահանջկոտ չէ ու շուտ է սկսում պտուղ տալ:


№ 47. Հաշտարխանի կարմիր խնձոր.—Pomme d'Astracan rouge. Astrakan rother. Սիրուն է և համեղ: Հասնում է յուլիսին: Ծառը բերրի է և շատ է սկսում պտուղ տալ: Ծուկայի—բազարի պահանջին յարմար է, թէև հեռու ձամբորդութեան չի զիմանում:

№ 129. Օկինի ամարային կալվիլ.—Բաց-կարմրագոյն սիրուն խնձոր է: Հաս-նում է յուլիսի վերջին: Ծառը աչքի է ընկնում սիրուն հասակով և առատ պտուղաբե-րութեամբ:

Ա շ ն ա ն տ ե ս ա կ ն ե ր

№ 24. Ամարային (շերտաւոր) Պարմէն.—Pearmain strié d'ete. Օգոստոս— սեպտեմբեր Ծառը լաւ է աճում, հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ և պտղառատ է, մանաւանդ խոնաւ տեղերում, թէև չոր տեղի վրայ ևս լաւ է բնամ-գալիս—աճում: Աշ-նան լաւ խնձորներիցն է: Անգլիայից է բերում:

29-88143



№ 38. Աշնանային կարմիր կալվիլ.—Calville rouge d'automne. Սեպտեմբեր—նոյեմբեր: Խոշոր է և շատ գեղեցիկ. սրան ևս պէտք է համարել տնտեսութեան և շուկայի համար յամար տեսակներից մինը: Ծառն աչքի է ընկնում իր խիստ աճեցողութեամբ. հողի ու տեղի վերաբերմամբ քիչ պահանջկոտ է, բայց թաց հողում առանձնապէս աւելի է յաջողվում, ուր անչափ շատ է մեծանում և վերին աստիճանի էլ շատ բերք է տալիս: Եթէ ուշ է քաղվում, կակուղ մասը փխրունանում է: Բերրի տեսակիցն է:

№ 97. Չելլինիի խնձոր.—Cellini. Օգոստոս—սեպտեմբեր: Հիանալի խնձոր է. ծառը աչքի է ընկնում առատ պտղաբերութեամբ, զիմացկունութեամբ և լաւ աճեցողութեամբ: Սկսում է պտուղ տալ 2—3 տարեկան հասակից, մանուսնդ եթէ պատուաստած է թոյլ աճող կոճղի վրայ: Որպէս աշնան տեսակ, արժէ որ տարածուի:

№ 54. Փլորիանի վարդագոյն խնձոր.—Rosenapfel Florianer. Միրուն գոյնի խնձոր է և միատեսակ պիտանի թէ սեղանի, թէ տնտեսութեան և թէ շուկայի համար:

Չ մ ո ս և ի տ և ս ա կ ն ե ր

№ 34. Ադամի Պարմէն—Pearmain d'Adams. Դեկտեմբեր—մարտ: Սրա ծառը՝ որ հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ, աճում է շատ լաւ, պտուղ տալ է սկսում վաղ և առատ:

№ 3. Ազնիւ տեսակի դեղին խնձոր.—Golden noble. Հոկտեմբեր—յունվար: Սրա ծառը աչքի է ընկնում իր գեղեցիկ հասակով. հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ և լաւ է զիմանում ձմռան խստութեանը: Բերրի տեսակիցն է և համարեա ազատ սընկային հիւանդութիւններից: Համուտ է հոկտեմբերին:

№ 7. Այգէրի կարմիր խնձոր—Sother Eiserapfel. Ծառը լաւ է աճում, երկարակեաց է և բերրի: Ծաղկում է ուշ, որ մեծ նշանակութիւն ունի այն տեղերի համար, որոնք ենթակայ են լինում եղեամներին: Պտուղները գարմանալի կերպով երկար են պահվում, որի համար և ֆրանսիացիք անունը դրել են «Durable trois ans»—երեք տարի զիմացող: Այս խնձորը լաւ զիմանում է նորը համեւուց էլ շատ աւելի երկար:

№ 79. Անգլիական ոսկեպսակին—Pepin d'Angleterre. Շատ պտղաբեր տեսակիցն է սրա ծառը: Պտուղը համուտ է աշնանը և զիմանում է մինչև գարուն: Ծառը խոնաւ հող է սիրում:

№ 26. Անգլիական դեղապետի խնձոր. Englische Spital Reinette, Syke House. Նոյեմբեր—ապրիլ: Սա բերուած է Անգլիայից. ըստ կարելոյն պէտք է շատ ուշ քաղել: Ծառը թոյլ է աճում, հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ, բայց աչքի է ընկնում զարմանալի առատ պտղաբերութեամբ: Արժի որ մշակուի այս տեսակը:

№ 20. Անտոնովկա: Սեպտեմբեր—յունվար: Ծախու համար լաւ է. քաղը սեպտեմբերից ոչ-վաղ: Մեզ մօտ—Կովկասում պահվում է բարձր տեղերում՝ պտուկած դրութեամբ, իսկ ցածր տեղերում փոխվում է աշնան խնձորի: Ծառը շատ լաւ է աճում. շուտ չի սկսում պտուղ տալ, բայց երբ սկսում է, առատ է տալիս:

№ 106. Արքայական յօգելեանական Գրահամա.—Grahams royal jubilee. Հոկտեմբեր—մարտ: Այս խնձորը Ազլիայից է բերուած. խոշոր է, լաւ է զիմանում ճամբորդութեան, ուստի և շուկայի համար՝ շատ յարմար է: Ծառը ուշ է ծաղկում, ամեն տարի առատ պտուղ է տալիս:

№ 25. Արքայական ցողունակարճ—Court pendu plat. Յունվար—մարտ: Մըշակելու արժանի տեսակիցն է և ամենահամեղներիցը. լաւ է թէ սեղանի և թէ շուկայի համար, ուր մեծ պահանջ կայ: Ծառը շատ պտղատու է: Ուշ ծաղկելու շնորհիւ գարնան ցրտերից չի վնասվում: Հողի ու տեղի վերաբերմամբ պահանջկոտ չէ: Պառկած պահելու խնձոր է: Պէտք է շատ ուշ քաղել, եթէ ոչ՝ պտուղը ճլորում է: Առողջ կերպով աճում է այնպիսի չոր տեղերում, ուր միւս տեսակները համարեա չեն մեծանում: Այս ծառի յատկութիւնն այն է որ պտուղը անհամեմատ ամուր է լինում կպած ծառին, որի համար էլ այս տեսակը շատ լաւ է այն տեղերի համար, որոնք ենթակայ են զօրեղ քամիներին:

№ 15. Արքայախնձոր—Reinette Ananas. Նոյեմբեր—փետրվար: Աղանդերի (դեսսերտի) համար առաջնակարգ խնձոր է և թանգ էլ գնահատվում է մայրաքաղաքներում: Ծառը դանդաղ է աճում, բայց սկսում է վաղ ու առանձնութեամբ պտուղ տալ: Պտուղը լաւ է զիմանում ճամբորդութեան: Առանձնապէս յաջողվում է դուսէնի վրայ պատուաստածը: Ծառը զիմացրում է անկային հիւանդութիւններին:

№ 37. Բաումանի ոննէտ—Reinette Baumann. Նոյեմբեր—ապրիլ: Սրա ծառը վաղ, կանոնաւոր և առատ պտուղ է տալիս, ուստի և բոլոր պտղաբոյժների ասելով՝ ցանկալի է որ ընդարձակ տարածուին ստանայ մեղանում: Բայց հնայիւով արդիւնաբերական լինելուն, դըժբաղդարար շատ քիչ է տարածուած: Նոյնիսկ վաղ քաղած պտուղը ևս չի ճլորում և լաւ է պահվում:

№ 27. Բլեննէյմի ոսկեխնձոր—Reinette dorée de Blenheim. Նոյեմբեր—մարտ: Արդիւնաբերական տեսակից է. մեղանում սրա աճեցնելը շատ ցանկալի է: Ծառը լաւ է աճում և աչքի է ընկնում պտղատուութեամբ: Ուշ պէտք է քաղել:

№ 98. Բուրխարդի ոննէտ—Reinette de Bouchardt. Այս խնձորը աւելի աշնան է քան ձմռան, քանի որ պտուղը սկսում է հասնել սեպտեմբերին զիմանում է մինչև յունվար: Ծառը հողի վերաբերմամբ առանձնապէս պահանջկոտ չէ. վաղ է սկսում պտուղ տալ և շատ կանոնաւոր: Ամեն տարի լաւ բերք է բերում:




Սպիտակ կալվիլի 8-ամեայ ծառը դուսէնի վրայ պատուաստած:

№ 111. *Յերնի նոր խնձոր*—Neuer Berner Apfel. *Դեկտեմբեր*—մայիս: Սա բոլորովին նոր է: Յանձնարարվում է շնորհիւ իր սիրուն տեսքի ու միւս աչքի ընկնող յատկութիւնների համար: Սա դեռ շատ քիչ է հետազոտուած մեղանում:

№ 68. *Բիսմարկ*.—Bismarck-Apfel aus Neuseland. *Հոկտեմբեր*—մայիս: Այս նոր տեսակի խոշոր խնձորը շատերն են սկսել աճեցնել: Իմանում է մինչև մայիս: Արժանի է որ աճեցնուի ոչ-միայն մասնաւոր, այլև արդիւնաբերական այգիներում: Մանաւանդ աչքի է ընկնում սրա երկու տարեկան պտուսաստի պտուղ տալու յատկութիւնը:

№ 29. *Բոլկէնի խնձոր*.—Bolkenapfel. *Յունվար*—յուլիս: Պիտանի է թէ սեղանի և թէ շուկայի համար: Լաւ պահելուց աւելի է համովանում: Լաւ է նաև չորացնելու համար: Սկսում է պտուղ տալ բաւական վաղ և առատ: Շատ դիմացկուն է ցրտերին. հողի ու տեղի վերաբերմամբ էլ պահանջկոտ չէ: Համուած է սեպտեմբերին և շատ երկար պահվում է առանց ճրտրելու—թարշամելու:



Gelber Belle fleur

№ 45. *Դեղին գեղեցկաձաղիկ (բել-ֆլէօր)*

№ 84. *Բրաբանդեան գեղեցկաձաղիկ*.—Belle-fleur de Brabant. *Տնտեսութեան համար* շատ լաւ խնձոր է. շուկայում էլ լաւ է ծախվում:

№ 33. *Յրէդից թերուած խնձոր*—Reinette de Breda. Սեղանի և տնտեսութեան համար ընտիր խնձոր է: Ծառն աճում է զօրեղ կերպով, պտղառատ է և անպահանջկոտ հողի վերաբերմամբ:

№ 21. *Բորսդորֆի ազնիւ տեսակի խնձոր*.—Borsdorfer Edel. *Սոյեմբեր*—փետրվար: Միջին մեծութեան խնձոր է: Ծառը երկարակեաց է և թէև ուշ է սկսում պտուղ տալ, բայց չափազանց առատ և կանոնաւոր է տալիս. մանաւանդ աւելի է յաջողվում հով տեղերում: Շուկայի համար լաւ է:

№ 85. *Դերինգի ոննէտ*—Reinette Goehring. *Դեկտեմբեր*—ապրիլ: Աղանդերի (դեստերտի) սիրուն տեսակից է, ինչպէս նաև տնտեսութեան համար յարմար: Ծառը աչքի է ընկնում իր երկարակեցութեամբ և առատ պտղաբերութեամբ:


№ 30. *Գրաֆենշտէյնի խնձոր*.—Gravensteiner. *Սոյեմբեր*—փետրվար: Աղանդերի (դեստերտի) համար շատ լաւ է: Ծառը պահանջում է ուժով և միքիչ խոնաւ հող: Ուշ է սկսում պտուղ տալ: Պահվում է մինչև փետրվար:

№ 40. *Դանցիգի Կալվիլ*.—Calville de Danzig. (Danziger Kantapfel) *Հոկտեմբեր*—փետրվար: Պտուղը բաւական խոշոր է և շուկայի համար յարմար: Ծառը արագ է մեծանում և բաւական դիմացկուն է թէ դարնան, թէ աշնան և թէ սաստիկ ցրտերին: Պտուղ է տալիս վաղ և առատօրէն: Այգու համար յարմար է. ամեն տեսակ հողում ևս յաջողվում է. մանաւանդ լաւ է յաջողվում կարճիկ ցցերի վրայ: Արժանի է որ մշակուի:

№ 45. *Դեղին գեղեցկաձաղիկ (բել-ֆլէօր)*.—Belle-fleur-jeune. *Սոյեմբեր*—մարտ և աւելի: Սեղանի հազուագիւտ խնձոր է. Ամերիկայից է: Իր համի ու գեղեցկութեան համար արժանի է առանձին ուշադրութեան: Պտուղը խոշոր է, ծառը միջակ ոյժի տէր. ամեն տարի առատ բերք է տալիս: Իմանում է երաշտին: Իր ակորժելի համի և ծմնան սպիտակ Կալվիլի նմանութեան համար ամեն տեղի շուկաներում մեծ պահանջ կայ: Պիտանի է մեծամեծ այգիներ զցելու: Ուշ է ծաղկում, որ մեծ նշանակութիւն ունի այն տեղերի համար, որոնք կնթակայ են եղեամբին: Շատ տեղերում սպիտակ Կալվիլի տեղն է ընկում:

№ 126. *Դէաւի ծմնան Կալվիլ*.—Deak's Wintercalvill. *Դեկտեմբեր*—մարտ: Պտուղը միջին մեծութեան է: Տեսքով ու համով նման է սպիտակ Կալվիլին, բայց նրանից շատ դիմացկուն է և բերրի:

№ 9. *Դին Կոլլին*—Dean's Codlin. Համուած է հոկտեմբերի վերջին և պահվում մինչև փետրուար: Ծառն աչքի է ընկնում վաղ և շատ առատ պտղաբերութեամբ և առանձնապէս էլ գեղեցիկ աճեցողութեամբ:



Weisser Winter Calvill

№ 23. *Զմնան սպիտակ Կալվիլ*:

№ 108. *Եւայի խնձոր*.—Manks Codlin. Pomme d'Eva. *Սեպտեմբեր*—նոյեմբեր: Պտուղը լաւ է և մեծ: Վաղ և առատ է պտուղ տալիս: Համուած է օդոտօտին:


№ 70. Էկլինվիլ սերմահանձոր—Ecklinville Seedling. Պտուղը շատ խոշոր է համուժ է սեպտեմբերին և դիմանում է մինչև նոյեմբեր և առելի:

№ 116. Թագուհի Օլգա—Königin Olga. Ուշահաս, ամուր խնձոր է: Որքան կարելի է երկար պէտք է թողնել ծառի վրայ:

№ 75. Թզախնձոր—Pomme Figue. Պտուղը փոքր է, համուժ է հոկտեմբերից մինչև դեկտեմբեր: Ծառը լաւ է աճում և առատ է պտղաբերում:

№ 15. Լանդսբերգի ռենէտ—Reinette de Lansberg. Նոյեմբեր—յունվար: Մեծ մշակման համար փարթամ տեսակիցն է: Պտուղները պինդ են լինում կպած ծառին: Ծառն աչքի է ընկնում զօրեղ ու արագ աճեցողութեամբ, պտղաբեր է և անպահանջոտ հողի վերաբերմամբ: Ամռան վերջին շրջութիւնից պտուղները հեշտութեամբ թափվում են: Բոլոր խնձորների մէջ համարեա ամենից լաւ արդիւնաբերականը սա է: Լաւ է դիմանում ճամբորդութեան: Վերոյիշեալ յատկութիւնների պատճառով արժի որ ընդարձակօրէն մշակուի այս խնձորը մեզանում:

№ 60. Լեզան Կալվիլ.—Kalville Lesans. Նոյեմբեր—ապրիլ: Պտղապահեստներում լաւ է պահվում՝ գոյնը չփոխելով: Սեզանի համար լաւ է: Ծառը արագ է աճում, մանուսանող յաջողվում է լարերի վրայ: Թոյլ աճող կոճղերի վրայ պտուտատաճները 2—3 տարուց յետոյ պտուղ են տալիս: Սրա ծառը համարեա չի վնասվում ֆուզիլիդայիում ստուած սնկից: Ֆրանսիայից է բերուած:



Caloill Madame Lesans

№ 60. Լեզան Կալվիլ:

№ 61. Կալվիլ վիկտոր Հաժ.—Calville Victor Hage. Լաւ տեսակի խնձորներից է: Ծառը աչքի է ընկնում համեմատաբար վաղ ու առատ պտղաբերութեամբ:

№ 31. Կարմելիտի ռենէտ—Karmeliter Reinette. Reinette des Carmes. Նոյեմբեր—ապրիլ: Միջին մեծութեան ընտիր խնձոր է թէ սեզանի և թէ անտեսութեան համար: Լաւ է դիմանում թէ պառկած դրութեան մէջ և թէ ճամբորդութեան: Ծառը միջին բարձրութեան է, հողի վերաբերմամբ պահանջոտ չէ: Քամիներին ենթակայ տեղերում ևս պիտանի է, որովհետև պտուղը ամուր է լինում կպած ծառին: Արդիւնաբերական զնահատելի տեսակիցն է:

№ 18. Կանաչ իշխանախնձոր—Fürtenapfel grüner. Մարտ—յուլիս: Միջին մեծութեան է, լաւ է պահվում: Խոտի գոյն ունի, բայց պահելուց դեղնաւուն է դառնում եթէ վաղ է քաղվում, չի ճլրում: Ծառը լաւ է աճում և յաջողվում է ամեն տեսակ հողում: Ամեն տարի արդիւնք է տալիս:

№ 28. Կանադայի ռենէտ—Reinette du Canada. (Pariser Rembour Reinette). Նոյեմբ.—գար. Իր աչքի ընկնող յատկութիւնների համար արժի որ շատ տարածուի Նորստրա մշակումը մեզանում: Ծառը լաւ է աճում և միշտ առատ պտուղ է տալիս: Պտուղները չնայելով մեծութեան, ամուր են լինում կպած ծառին, իսկ պառկած դրութեան մէջ էլ չեն ճլրում և լաւ են դիմանում ճամբորդութեան: Ծառն էլ հողի ու տեղի վերաբերմամբ պահանջոտ չէ:

№ 109. Կես լէկի խոհանոցի խնձոր—Kuchenapfel Keswicker. Տեսեսութեան համար լաւ է և շատ բերրիներիցն է:

№ 1. Կասսէլի մեծ ռենէտ—Reinette de Caux. Ամեն կողմով լաւ է թէ աղանդերի (դեստերտի) և թէ արդիւնաբերութեան համար: Հասնում է յունվարի վերջին և դիմանում է միքանի ամիս: Ծառը լաւ է աճում, վաղ է պտուղ տալիս և առատ: Խորհուրդ ենք տալիս՝ արդիւնաբերական նպատակով մեծ քանակութեամբ մշակել: Տաք վայրերում հեշտ է հիւանդանում Fusicladium ստուած սնկով: Պտուղը պէտք է ուշ քաղել:

№ 43. Հարբերտի ռենէտ—Reinette Harbert. Դեկ.—մարտ: Աղանդերի (դեստերտի) ու անտեսութեան համար ընտիր խնձոր է: Պահելուց չի ճլրում: Ծառը լաւ է աճում, ոռոգումը չպէտք է պակասի, այլապէս պտուղները հեշտութեամբ են վայր թափվում:

№ 103. Հօրովատուի վարդագոյն խնձոր—Himbeerapfel vom Holowaus. Սրա ծառը աչքի է ընկնում իր պտղաբերութեամբ: Հասնում է դեկտեմբերին և պահվում է մինչև մարտ: Շուկայի առաջնակարգ տեսակներիցն է:

№ 118. Զմռան ծիրանագոյն Կուզինո—Cousinot rouge d'hiver. Դեկ.—ամ: Սեզանի և շուկայի համար յարմար է. հասնում է դեկ.—ին և շատ լաւ պահվում մինչև ամռան տեսակների երեւոյլ: Ծառը հողի վերաբերմամբ պահանջոտ չէ, արագ է աճում և ունի մշտական ու անհամեմատ առատ պտղաբերութեան պատճառով աճեցողութեան ոյժը պակասում է:

№ 82. Զմռան կարմիր Կալվիլ.—Calville rouge d'hiver. Հասնում է նոյ.—դեկտ. չի թարշամում և ոչ էլ փոռում պառկած դրութեամբ. իսկ լաւ պայմաններում պահվում է մինչև գարուն: Մեծ պահանջ կայ շուկայում: Ծառը թէև շատ չի մեծանում, բայց բաւական խիտ ու գեղեցիկ ճղներ է ունենում: Խոնաւ ու ծանր հողում լաւ չի յաջողվում:

№ 23. Զմռան սպիտակ Կալվիլ.—Calville blanc d'hiver. Հոկ.—նոյ. եւ պահվում է մինչև մարտ: Այս խնձորը, իր ընտիր համի համար մրցողը չունի և կոչվում է խնձորների թագուհի: Լաւ է յաջողվում այն տեղի վրայ, որ չափաւոր թաց է, տաք, աննոստ և զօրեղ քամիներից պաշտպանուած: Տանել չի կարողանում ստորհողեայ ջուրը և միքիչ էլ նեղվում է հիւանդաբեր սունկերից: Շուկայում մեծ պահանջ կայ սրանից:

№ 2. Չմնան ոսկեպարմէն կամ խնձորների թագուհի—Rejne de Reinettes. Մոյեմբեր—մարտ: Այս սքանչելի խնձորի համար պողատու ծառերի յայտնի մասնագէտ Օրբերգիկն ասում է «սա հէնց այն տեսակն է, որ անհրաժեշտ է տնկել ու բազմացնել»: Պրոֆեսոր Շաուր այս խնձորը համարում է «պտղատու ծառերի մարգարիտներից մինը». իսկ Լուիսէն ասում է «եթէ մէկը կարող է դռնէ մի ծառ տնկել, ապա ուրեմն խորհուրդ կը տանք նրան՝ որ հէնց այս տեսակն ընտրի»: Գնահատելի արդիւնաբերական խնձոր է, լաւ է դիմանում ճամբորդութեան. ձմեռուան համար պահածները ոչ ճրրում են և ոչ կուչումուչ գալիս: Ծառի վրայ էլ շատ լաւ է պահվում: Ծառն աճում է կանոնաւոր կերպով: Պտուղ տալն սկսում է վաղ և առատ:

№ 128. Չնակալվիլ—Calville neige. Schnee Calville. Կաւ արդիւնաբերական տեսակիցն է. լաւ է պահվում պակած դրութեամբ:

№ 14. Մեծ ըսկայայածն զրախտախնձոր—Bohnappel grosser Reinischer. Երկար պահուող և սնանութեան համար գնահատելի տեսակներիցն է: Պտուղը՝ որ ամուր է լինում կպած ծառին, պէտք է ուշ բազուի, որովհետև վաղ բազածը պահած ժամանակ ճրրում է: Ծառը լաւ է աճում և պողաբեր է:



London Peppering


№ 12. Լոնդոնի Պեպին:

№ 4. Մշկահամ ոննէտ—Renette Musqué. Մոյեմբեր—գարուն: Ազանդերի համար լաւ խնձոր է: Պահելուց չեն ճրրում: Ծառը շատ չի աճում, բայց առանձնապէս յաջողվում թույլ աճող կոճկերի վրայ: Ծախու համար լաւ է: Արժի աճեցնել այնտեղ, ուր ծառը կարող էր ազատ մնալ Fusicladium տնկից:

№ 107. Նատուզիուսի աղանախնձոր.—Natusius Taubenapfel. Դեկտեմբեր—ապրիլ: Պտուղը խոշոր է, ծառը զօրեղ, դիմացկուն և բերրի: Բերում է Գերմանիայից:

№ 62. Նիւտոնի Պեպին—Peppinge Newtown. Ամերիկայից է բերում: Պտուղը պահվում է մինչեւ յունիս: Ենորհի պակած դրութեամբ լաւ մնալուն և հետո ճամբորդութեան դիմանալուն՝ շուկաներում մեծ պահանջ կայ այս խնձորի: Սրա ծառի համար պէտք է աննպատու խոր հող եւ տաք տեղադրութիւն:

№ 13. Շամպայնի ոննէտ—Reinette de Champagne. Մեղանում—կովկասում այս խնձորը ծախվում է տափակ կալվիլ սնունով: Յանձնարարվում է արդիւնաբերական պողատու այգի զցոյրներին: Ծառը չափաւոր մեծութիւն ունի և շատ է ապրում:



№ 13. Շամպայնի ոննէտ՝ ընական 1/2 մեծութեան:

Շատ վաղ է սկսում պտուղ տալ, բերքը մշտական է և առատ: Մրգավաճառները առանձնապէս գնահատում են սրան՝ որ թէ լաւ է մնում պտուղած դրութեան ու չի ճըլորում, թէ չի փառում և թէ պահում է իր համը մինչեւ յուլիս, նոյնիսկ միւս տարուայ սեպտեմբեր: Վաղ չպէտք է քաղել: Միւս տեսակներից պակաս է ենթակայ պտղակեր միջատներին և համարեա թէ չի հիւանդանում սնկով:

№ 16. Ոսկեպեպին խնձոր—Peppinge Dentscher Gold. Դեկտեմբեր—մարտ: Փոքր մեծութեան է. լաւ է սեղանի և տնտեսութեան համար: Ծառը միջին մեծութեան է, շատ պտղառատ և պահանջկոտ չէ: Պտուղները ամուր են լինում կպած ծառին. որքան կարելի է ուշ պէտք է քաղել: Ծառը սիրում է խոնաւ հող: Շուկայի համար լաւ է:

№ 101. Պոնտուազի գեղուհի—Belle de Pontoise. Դեկտեմբեր—մարտ: Պտուղը ամուր է լինում կպած ծառին: Ծառ լաւ է պահում եւ դիմանում է ճամբորդութեան: Ծառը աչքի է ընկնում իր արագ աճեցողութեամբ և բերրութեամբ: Բերում է Ծրանսիայից: Արժանի է առանձին ուշադրութեան:

№ 11. Պարոնի կարմիր խնձոր—Rother Harrenapfel. (Stetiner Rother). Դեկտեմբեր—ամառ: Սեղանի և տնտեսութեան համար ուշադրութեան արժանի խնձոր է. մանաւանդ լաւ է չորացնելու համար: Հողի ու տեղի վերաբերմամբ պահանջկոտ է ծառը:


№ 36. Պարկէրի Պեպին—Pépin de Parker. Դեկտեմբեր—ապրիլ: Շնորհիւ այն բանին, որ լաւ է պահում մինչև ապրիլ ու մայիսի և գիմանում է հետո ճամբորդութեան, մրգավաճառները հեշտութեամբ են առնում: Ծառը միակերպ լաւ է աճում թէ խոնաւ և թէ չոր հողում: Ուշ է ծաղկում և շատ էլ շուտ է սկսում պտուղ տալ: Լաւ բերք է տալիս, եթէ պատուաստուած է թոյլ աճող կոճղի վրայ: Պտուղը ամուր է լինում կպած ծառին, որի համար էլ յարմար է քամիներին ենթակայ տեղերի համար: Անպատճառ պէտք է քաղել ուշ:

№ 120 Պոյնիկ խնձոր—Poinikapel. Մրա ծառը լաւ է աճում, երկարակեաց է, դարմանալի գիմացկուն էրաշաին, իսկ մեծանալուց յետոյ շատ պտղատու: Դիմանում գեկտեմբեր—ապրիլ: Սա Անդրկովկասում շատ յարգի է, ուր շատ ցամաքացրած տեղերում կարելի է աճեցնել մեծ յաջողութեամբ:

№ 51. Ռիբստոնի Պեպին—Pépin Ribston. Չմասն լաւ տեսակներիցն է. հասնում է նոյեմբերին և գիմանում մինչև փետրվար: Պտուղած դրութեան մէջ չի ճըլորում: Ծառը զօրեղ կերպով է աճում, ուստի և արժանի է որ աճեցնուի արդիւնաբերական այգիներում:

№ 133. Սիմիրենկո կանաչ—Reinette Simirenko. Reinette verte de Simirenko Այս խնձորը զանազան մեծութեան է լինում և շատ անգամ էլ մի կէսը միւս կէսից աւելի լաւ հասած: Պտուղը գեկտեմբերին են դարսում. լաւ է պահպանվում ու ամբողջ ամառ չի զրկվում իր զարմանալի լաւ համից: Ծառը՝ ջանել ժամանակ աչքի է ընկնում զօրեղ աճումով, հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ ու սկսում է պտուղ տալ վաղ և շատ առատութեամբ: Արդիւնաբերական տեսակէտից սա շատ օգտաւէտ է: Այս ծառը անկողը հէնց ստաջին քաղից կը համոզուի, որ չի սխալուել իր ընտրութեամբ:

№ 17. Սինապ-Սարի: Արդիւնաբերական շատ արժեքաւոր տեսակիցն է: Ծառը շատ երկարակեաց է. ջանել ժամանակ բնորոշ բարձր բրգաձև է և մնում է այգպէս



№ 50. Եստիլուդի հսկայ դեղձ:

մինչև լիակատար բերք տալը: Միքիչ ուշ է պտուղ տալիս: Հասակն առած ժամանակ առաա բերք է տալիս, որ հասնում է 30—40 փթի մի ծառից: Մինապ-Սարիի՝ պտուկած զրութեամբ լաւ պահուելու յատկութիւնը զարմանալի է. օրինակ՝ մի տարի եւ աւելի կը մնայ առանց փտելու: Իսկ աւելի լաւ համ է սկսում ստանալ յունվարից: Մինապ-Սարին կամ Սարի-Սինապը լաւ է աճում այն այգիներում, որոնք ըստ կարելոյն յաճախ են ոռոգվում—չրվում:

№ 19. Սինապ Կանդիլ: Նոյեմբերից—ուշ զարուն: Այս հիանալի խնձորի լայնութիւնը հասնում է 2, իսկ երբեմն էլ համարեա 3 վերջոկի: Ներկայումս սա համեմատվում է ամենալաւ արդիւնաբերական խնձորների հետ և արտահանութեան—մեր երկրից ուրիշ երկիրներ տանելու մեծ պահանջ կայ: Կանդիլի պողպաբերութիւնը ահագին է. մի ծառը յաճախ 50—60 փութ պտուղ է տալիս: Նպատակայարմար պայմաններում, այսինքն պաշտպանուած և ոռոգուելու հնարաւորութիւն ունեցող վայրերում արժի որ շատ լայն չափով տարածուի:



Օրլէանի ոննէտի ծառը՝ դուսէնի վրայ պատուաստած:

№ 55. Վազնէրի մրցանակի խնձոր.—Wagner Apfel. Price Apple: Հոկտեմբեր—մարտ: Պտուկած զրութեամբ պտուղները շատ դիմացկուն են, չեն փտում և ոչ էլ թարշամում—ճլորում: Պահվում է մինչև մայիս: Լաւ է աղանդերի (գեսսերսի) համար: Ծառը աչքի է ընկնում իր բուսական զօրեղ աճեցողութեամբ: Սկսում է պտուղ տալ վաղ և առատօրէն: Հողի վերաբերմամբ շատ քիչ պահանջկոտ է: Մանուածնդ լաւ է յաջողվում չոր տեղերում:

№ 105. Վարդագոյն Նոր կարմիր խնձոր—Himberapfel. Neuer rother. Մրա ծառը՝ որ առաջ է եկած Հօլլանտի վարդագոյն խնձորի սերմից, աչքի է ընկնում իր վաղ և աւելի կամ պակաս միատեսակ առատ պողպաբերութեամբ: Փորձառու պտղաբոյժները խորհուրդ են տալիս մշակելու այս տեսակը:

№ 6. Վելլինգտօն.—Dumelow Seedling. Wellington. Դեկտեմբեր—ապրիլ: Սոչոր խնձոր է և միատեսակ պիտանի թէ սեղանի և թէ անտեսութեան համար, սակայն աւելի ախորժելի համ է ստանում լաւ պահելուց յետոյ: Ափսոս որ քիչ է տարածուած: Պտուղը դիմանում է մի ամբողջ տարի: Ծառը՝ Նոյնիսկ չոր տեղերում աչքի է ընկնում իր լաւ աճեցողութեամբ և պողպատութեամբ: Շատ լաւ է արդիւնաբերական մշակման համար:

№ 119. Վօլֆ.—Wolf River. Վերջերս այս խնձորից սկսել են շատ մշակել. բերում է վիսկոնսին նահանգից: Ախորժելի թթուաշ համ ունի:

Այս նոր եւ շատ արժէքաւոր խնձորը՝ որ լինում է ցուցանանդէսներում, հատը 2 զրվանքայ է կշռում:

№ 53. Տանտիկին խնձոր—Mère de ménage. Grosser Rambour. Դեկտեմբեր—յունվար: Շատ խոշոր խնձոր է և առանձնապէս պիտանի անուշիկ գործածութեան համար: Ծառը աչքի է ընկնում զօրեղ և գեղեցիկ աճեցողութեամբ:

№ 22. Տտիպ Կալվիլ—Gewürs Kalvill. Սեպտեմբեր: Միակերպ պիտանի պտուղ է թէ սեղանի և թէ անտեսութեան համար: Ծառը միջակ մեծութեան է: Պաղաբեր տեսակիցն է և լաւ է աճում չոր տեղերում:

№ 125. Փրկչի Կալվիլ—Calville St. Sauveur. Շատ լաւ խնձոր է. արժէ մշակել:

№ 35. Օքերդիկի ոննէտ—Reinette d'Oberdick. Դեկտեմբեր—մարտ: Արժանի է առանձին ուշազրութեան՝ թէ իր համեղութեան և թէ պտուկած զրութեամբ լաւ մնալու համար: Պտուղը ամուր է լինում կպած ծառին, որ լաւ է աճում և աչքի է ընկնում իր պողպատութեամբ: Այս ծառի ընտիր յատկութիւններից մինն էլ այն է, որ սնկով (Fusicladium) չեն հիւանդանում ոչ տերեւները և ոչ պտուղները: Ծախու համար լաւ է:



№ 69. Օսոզատ. Օսոզատ Կալվիլ—Doux d'Argent, Doux d'Angers. Փետրվար—մայիս: Մաստացուած է ձմռան սպիտակ Կալվիլի սերմից: Պտուղը լաւ է դիմանում ճամբորդութեան և լաւ է պահվում պտուկած զրութեամբ: Ծառն զօրեղ է և շատ բերրի:


№ 8. Օրլէանի ոննէտ—Reinette d'Orleans. Դեկտեմբեր—ապրիլ: Այս խնձորը թէ աղանդերի (գեսսերսի)

Չմռան ոսկեպարմէնի 8-ամեայ ծառը՝ դուսէնի վրայ պատուաստած

սերտի) և թէ ամենաարդիւնաբերական տեսակիցն է համարվում: Պտուղը պէտք է քաղել իր ժամանակին, ապա թէ ոչ՝ եթէ մնայ ծառի վրայ, ալիւր կը կտրուի: Ծառը լաւ է աճում, վաղ է սկսում պտուղ տալ և աչքի է ընկնում իր պտղաբերութեամբ:

№ 10. Փրանսիական միրահինձոր—Reinette grise francaise. Հիանալի է ձման աղանդերի համար: Հասնում է նոյեմբերին և լաւ պայմաններում դիմանում է մինչև միւս քաղը: Ծառը լաւ է աճում և շատ պտղաբեր է: Վաղ քաղած պտուղները ճլրրում են: Շուկայում միշտ լաւ գին են տալիս:

№ 58. Քետիէ—Quetier. Պտուղը հասնում է ամբողջ ձման ընթացքում և երկար պահվում: Ծառը առատ է պտղաբերում:



№ 44. Սպիտակ Ռոզմարին՝ ընտան 1/2 մեծութեան

Ամերիկական խնձորներ

Մայր-ծառերն ստացուած է իշխան Ա. Ե. Գագարինի բուժարանից:

№ 122. Այվնիու—Lvanhoe (Վերդինիայից): Մինչև ուշ աշուն պտուղը ամուր կպած է լինում ծառին և պահվում է մինչև ամառ: Ծառը լաւ է աճում, սկսում է պտուղ տալ վաղ ու առատ և միշտ պտղաբեր է:

№ 135. Բարստէր.—Baxter. Կանադայից է բերուած. շուկայի զարգն է, ուր համեմատելից լաւ է ծախվում իր ընտիր յատկութիւնների համար: Հասնում է դեկտեմբեր—յունվար: Ծառն աճում է զօրեղ, սաստիկ ցրտից չի նեղվում, լաւ մշակելով՝ ամեն տարի առատ պտուղ է տալիս: Զորացնելու համար հիանալի խնձոր է:

№ 124. Լանգֆորդ սերմնախնձոր—Lanyford Seedling. Սովորական հոգացողութեամբ պահպանվում է մինչև մայիս—յունիս: Լաւ է հարաւային արդիւնաբերական այգիների համար:

№ 117. Չման ըսնան (աղամսթուղ)—Winter Banana. (Ինդիան նահանգից): Լաւ է պահվում մինչև ապրիլ: Ծառը զօրեղ և ուղիղ է աճում, ամեն տարի առատ պտուղ է տալիս: Երբեմն ծառի վերին պտուկները պտուղ են տալիս երկրորդ տարում: Սեղանի և շուկայի համար ընտիր յատկութիւններ ունի:

№ 121. Սարինջ-խնձոր—Orange. Հոկտեմբեր—դեկտեմբեր: Այս խնձորի առանձին յատկութիւնն այն է, որ դիմանում է ամեն տեսակ կլիմայական չափազանցութիւններին, այն է՝ սաստիկ տապին և երաշտին հարուում: Ծառը՝ առանց յոգնելու ամեն տարի առատ բերք է տալիս:

№ 134. Սեւաճիւղ Բլէկ-Տուիգ—Mammoth Black—Twig. Գիմանում է մինչև ապրիլ: Արկանզասի նահանգիցն է բերուած: Զնայելով իր խոշորութեան և ծանրութեան, որ երբեմն 1 1/2 գրվանքայ է կշռում՝ մէկը, լաւ է մնում ծառի վրայ: Ծառը աճում է լաւ և շատ առատ էլ պտուղ է տալիս:

Վայրի ծառերի վրայ ակնատակած կամ պատուաստած խնձորենիք

Վայրի թոյլ ծառերի վրայ տանձենի ու խնձորենի պատուաստելն աւելի և աւելի է տարածվում: Մեզ մօտ—կովկասում ընդունուած է պտղատու ծառերը՝ որոնք պատուաստած են վայրի ծառի վրայ և արդէն միջին մեծութեան բուն ունեն, անկել միմեանցից 3—4 սաժէն հեռու-հեռու: Կարգերի միջև եղած տարածութիւնից յաճախ օգտւում են՝ այնտեղ ցանկելով բանջարեղէն կամ որեւէ տարեկան բոյսեր: Բայց այդ բանը վնաս է. որովհետև բանջարանոցի բոյսերի մշակումը պահանջում է մշտական և շատ առատ պարատացումն ու ոռոգումն, որ՝ ինչ ասել կ'ուզի, չի կարող վատ չափել անկած մայր-ծառերի վրայ:



Բիւսնարկ խնձորի 2 տարեկան ծառը:

Հիմնական կանոն է՝ ծառերի միջև զբաղումը հողը միշտ պէտք է փուչփուչացրած լինի և բոլորովին ազատ անպէտք բոյսերից: Ճիշտ է՝ անհրաժեշտ է այդ պահանջը կատարելը, բայց հողը այդպէս փուչ-փուչ ու մաքուր պահելու համար ծախս է պահանջում: Ամենից լաւը այն կը լինի և նոյնիսկ արած ծախսը հեշտութեամբ ու աւելորդով յետ կրստացուի, եթէ կարգերի միջի տարածութեան վրայ զեղծի կամ թոյլ աճող կոճղի վրայ պատուաստած խնձորի ու տանձի ծառեր անկուի: Մինչև՝ կարգերում անկուած հիմնածառերի լիակատար պտուղ տալը, միջանցքներինը արդէն միբանի անգամ արգիւնք կը լինեն տուած և ուրեմն կարելի է հեռացնել նրանց:

Ամարանոցների փոքրիկ այգիների համար առանձնապէս կարելի է ստաշարկել թոյլահասակ տանձի ու խնձորի ծառեր: Աչքի առաջ ունենալով որ թոյլահասակ տանձի ու խնձորի ծառերը այնպիսի պտուղներ են տալիս, որոնք աչքի են ընկնում իրանց խոշորութեամբ, գեղեցկութեամբ ու համով, վերջին ժամանակներս սկսել են աւելի ընդարձակ տարածութեան վրայ անկել, որից ստացվում է փայլուն հետանքներ:

Աչքի առաջ ունենալով որ թոյլահասակ տանձի ու խնձորի ծառերը այնպիսի պտուղներ են տալիս, որոնք աչքի են ընկնում իրանց խոշորութեամբ, գեղեցկութեամբ ու համով, վերջին ժամանակներս սկսել են աւելի ընդարձակ տարածութեան վրայ անկել, որից ստացվում է փայլուն հետանքներ:

ԳՈՒՍԷՆԻ ՎՐԱՅ ԱԿՆԱՏԱԿԱԾ ԿԻՍԱԳԱՃԱՃՆՆԵՐ

(Pyrus Praecox)

Միամեայ պատուաստածի հատը 30 կուպէկ:
Չեւ-ստացած—ՃԻԻՂԱՒՈՐՈՒՄԾ՝ երկամեայ պատուաստածի հատը 40 կուպէկ:

Գուսէնի վրայ պատուաստած ծառիկները աչքի են ընկնում, համեմատաբար, թոյլ աճեցողութեամբ, վաղ են սկսում պտուղ տալ, իսկ պտղաբերութիւնը՝ եթէ ծառերը առանձնապէս շատ ու անփորձ կերպով կը տրտուած չլինեն, չափից դուրս առատ է. պտուղները լինում են մեծ-մեծ, բան վայրի ծառերի վրայ պատուաստածներինը: Հողի վերաբերմամբ կիսագաճածը այնքան էլ պահանջկոտ չէ, ինչպէս դրախտածառը և վատ չի աճում նոյնիսկ չոր տեղերում: Սակայն ծառը այնպէս երկարակեաց չէ, ինչպէս-որ են վայրի ծառերի վրայ պատուաստածները:

ԲՈՒԾԱՐԱՆՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԾԱԽՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- | | |
|-------------------------|----------------------------|
| № 53. Տանտիկին. | № 1. Կաստէլի մեծ ունէտ. |
| » 55. Վազնէրի մլցանակի. | » 8. Օրլէանի » |
| » 30. Գրաֆենշտէյնի. | » 37. Բաումանի » |
| » 68. Բիւսնարկ: | » 27. Բլինգէլմի ոսկուննէտ: |

Այդ տեսակների նկարագրութիւնը տեսնել վերը:



ԳՐԱԽՏԱԽՆՁՈՐԵՆՈՒ ՎՐԱՅ ԱԿՆԱՏԱԿԱԾ ԳԱՃԱՃՆԵՐ

(Pyrus Malus pumila var. Paradisiaca L.). Գրախտախնձորենու վրայ պատուաստած խնձորենիները աչքի են ընկնում իրանց կարճ հասակով. սկսում են պտուղ տալ երկու տարեկան հասակից, և ստացվում են ցուցահանդէսին իսկ արժանի առանձնակին խոշոր, գեղեցիկ և համեղ պտուղներ, այսպէս ասած՝ հատապարանք, որ առանձնապէս թանկ է գնահատվում մրգավաճառներից:


ԲՈՒԾԱՐԱՆՈՒՄ ԵՂԱԾ ԾԱՌՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- | | |
|------------------------------------|---|
| № 99. Ապրրտ կայսր Աղէքսանդր. | № 55. Վազնէրի մրցանակի. |
| » 45. Դեղին գեղեցկաժառիկ. | » 107. Նատուզիուսի աղանախնձոր |
| » 68. Բիւմարի. | » 106. Գրահամն արրայսկան յօբե-
լիանական. |
| » 30. Գրաֆինշտէյնի. | » 15. Գրախտախնձոր. |
| » 108. Եսայի ինձոր (Manks Codlin). | » 37. Բաուսմանի սննէտ. |
| » 2. Չմնան ոսկեպարմէն. | » 28. Կանանդայի » |
| » 23. » սպիտակ Կարվիլ. | » 8. Օրլէանի » |
| » 82. » կարմիր » | » 13. Շամուայնի » |
| » 40. Դանցիգի » | » 35. Օքերոլիկի » |
| » 103. Վարդապոյն ինձոր Հօրվատսից | » 5. Լանսլէրգի » |
| » 53. Տանտիկին (Menage) | » 97. Չեւիինի » |
| » 111. Բերնի նոր ինձոր. | |


Այդ տեսակների նկարագրութիւնը տեսնել վերը:




Նկար 7.




Նկար 8.
Մապաստակից պաշտպանելու համար փշապատելը:




Կանոնաւոր տնկուած ծառ:




Մորը տնկուած ծառ:
ՂԱԾՈՒՄ ԵՂԱԾ ԾԱՌՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ



Նկար 1.




Նկար 2.



Նկար 3.




Նկար 4.



Նկար 5.

Մամուռէ ջարձիկով մէկ կամ երկու ցցին կապելը:



Նկար 6.

Կողքըհանց նեցուկ տալն ու կարճիկ ցցերին կապելը:

Չարդի խնձորենիք

Միամեաների հատը 30 կոպէկ: Երկամեաներինը՝ 40 կոպէկ:

Առհասարակ հազիւ է պատահում, որ ծառերի տեսակներից մինն ու մինը աչքի ընկնի այնպէս փարթամ փթթումով ինչպէս զարդի խնձորենիքը, որոնք ապրիլ-մայիսին ծածկվում են անհամար քաղմաթիւ գեղեցիկ, խոշոր ու բուրավետ—սիրուն հոտ արձակող ծաղիկներով: Իսկ աշնանը այդ ծառերի ուստերը մեծ մասամբ ձկոտում—թերվում են զանազան գոյնի, մեծութեան ու ծեւի առատ պտուղների ծանրութիւնից, որոնք զանազան գործադրութիւն են գտնում անտեսութեան մէջ:

- № 90. *Pyrus prunifolia* W. var. *fructo coccineo major* hort.—Կարմիր-ծիրանեգոյն գեղեցիկ պտուղներ ունի:
- № 94. » » *fructo luteo* hort.—Գեղնագոյն պտուղներ ունի:
- № 95. » » *fructo striata* hort.—Պտուղները երվներանգ են:
- № 91. *Pyrus spectabilis*. Ait.—Չինական ծագումն ունի, շատ գեղեցիկ ծառ է, զարմահալի գորեղ կերպով է ծաղկում: Ամենագեղեցիկներիցն է:
- № 93. *Pyrus Ringo*. var. *fastigiata bifera*.—Ծառի հասակը բրգածն է, շատ վաղ ու առատ է ծաղկում: Շատ յաճախ սեպտեմբերին երկրորդ անգամ է ծաղկում: Պտուղը զարդարուած է կարմրադեղին գոյնով:
- № 91. *Pyrus baccata* var. *fructo maxima*.—Պտուղը հիանալի գոյներով է և բաւական խոշոր:

ՏԱՆՉԵՆԻՔ

ՎԱՅՐԻ ՏԱՆՉԻ ԾԱՌԵՐԻ ՎՐԱՅ ՊԱՏՈՒԱՍՏԱԾ ՏԱՆՉԵՆԻՔ

Միամեայ ծառերի	հատն	արժի	30 կ.
»	»	հարիւրը	» 25 n.
Երկամեայ Չեի-ՍՏԱՑԱՃՆԵՐԻ	հատն	»	40 կ.
»	»	հարիւրն	» 35 n.
Երեքամեայ	»	հատն	» 45 կ.
»	»	հարիւրն	» 40 n.

Ա մ ո ա ն տ ե ս ա կ ն ե ր

№ 8. Անտառի գեղունի կամ Ջրալի տանձ—Fondante de bois. Բիզիայից է երբուած. ամենաարժէքաւոր տեսակներից մինն է և արժի որ ընդարձակ ծառայ ստանայ արդիւնաբերական նպատակով: Ծառը աչքի է ընկնում իր առողջութեամբ: Սերկիլի ծառի վրայ լաւ է պատուաստվում և ամեն տարի վաղ ու առատ պտուղ է տալիս: Հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ:

№ 2. Բէօրէ Ժիֆան—Beurré Giffard, Հասնում է յուլիսի ռուսջին կիսին, իսկ երբեմն էլ աւելի վաղ: Հասնելուց 8 օր յետոյ պէտք է պոկել ծառից: Ծառը աչքի չի ընկնում զօրեղ աճեցողութեամբ:

№ 3. Դոյէնատանձ—Doyenné de Jouillet. Յունիս: Ծառ վաղ հասնող տեսակիցն է: Անպատճառ պէտք է ծառից պոկել հասնելուց միքանի օր առաջ: Ծառը շատ պտղաբեր է և վաղ է սկսում պտուղ տալ:

№ 48. Իլինկա: Զարմանալի տեսական, պտղաբեր և դիմացկուն ծառ է: Միակերպ լաւ է թէ շուկայի և թէ տնական գործածութեան համար, եթէ միայն քաղուի բոլորովին հասնելուց առաջ: Հասնում է յունիսին:

№ 37. Կլապպի (Կուլաքի?) սիրական տանձ.—Favorite de Clapp. Ընտիր տեսակներից մինն է: Հասնում է յուլիսին: Մրգավաճառները ուրախութեամբ են առնում այս տանձից:


Ալման եւ ձմռան տեսակներ

№ 20. Ալանսոնի Դոյէնատանձ—Doyenné d'Alacon. Դեկտեմբեր—մարտ: Առաջնակարգ տանձերից է: Ծառն ամուր է և շատ պտղառատ: Պէտք է ուշ քաղել:

№ 46. Ալեքսանդրին մաս.—Alexandrine Mas. Իր շատ երկար մնալու զարմանալի յատկութեան պատճառով պիտանի է վաճառքի համար: Ծառը շատ դիմացկուն է: Պտուղը դիմանում է մինչև ապրիլ:

№ 25. Անգուլէմի դրքսուհի—Duchese d'Angoulême. Հոկտեմբեր—դեկտեմբեր: Այս տանձը իր բարձր յատկութիւնների համար շատ է գործածվում՝ որպէս ուշ-աշնան աղանդեր (դեստրո): Պտուղը լաւ է դիմանում ճամբորդութեան, որի պատճառով էլ լաւ դին ունի մրգավաճառների մօտ: Պտուղը պէտք է շատ թողնել ծառի վրայ, եթէ ոչ՝ շուտ քաղածը ճլորում է պահելուց և համն էլ կորցնում: Ծառն աճում է զօրեղ և շատ բերրի է: Սերկիլին արուած պատուաստը լաւ է յաջողվում:

№ 16. Արդանպոնի կոզետանձ—Beurre d'Ardenpont. Մոյեմբեր—դեկտեմբեր: Բոլորովին հասնելուց յետոյ միայն կարելի է գործածել, ուստի որքան կարելի է ուշ



Bosc's Flaschenbirne

№ 10 Բերնամազ կամ Կոզետանձ (Բէօրէ-բոսկ):

պէտք է քաղել: Արդիւնաբերական մեծ արժէք ունի, որի համար աճեցումը ցանկալի է: Ծառն աչքի է ընկնում զօրեղ աճեցողութեամբ, շատ շուտ է սկսում պտուղ տալ: Արդիւնաբեր տեսակիցն է: Սերկիւլին արուած պատուաստը շատ լաւ է յաջողվում: Ծաղիկները շատ էլ զգայուն չեն դէպի ցուրտը:

№ 27. Աւրանշի սիրուն Լուիզ—Louise bonne d'Avranches. Սեղանի համար առաջնակարգ տանձերիցն է: Ծառն աչքի է ընկնում վաղ և շատ առատ պտղաբերութեամբ: Թէպէտ շատ խոշոր են, բայց ամուր են լինում կպած ծառին: Ծախու համար շատ լաւ է, ուստի արժանի է որ լայն կերպով մշակուի:

№ 12. Բարգամոտ քարեքաղդիկ—Bargamotte Fortunés. Յունվարից—մարտ: Սեղանի համար շատ լաւ տանձ է: Ծառն աչքի է ընկնում զօրեղ աճեցողութեամբ և պտղաբերութեամբ:

№ 10. Բերնահալ կամ կողեսանձ—Calepasse Bosc. Beurre Bosk. Հոկտեմբեր: Կովկասում յայտնի է Բէօրէ Ալեքսանդր անունով: Արժէ շատ մշակել: Պտուղը ամուր է լինում կպած ծառին և դիմանում է ճամբորդութեան: Մակից (Fusicladium) չի տանջվում:

№ 14. Բէօնէ Նապոլէօն—Beurré Napoleon. Սեպտեմբեր—նոյեմբեր: Ծառը համեմատաբար թոյլ է աճում: Պտուղ տալը վաղ է սկսում և մշտական է: Ծախու համար լաւ է: Արժի որ մեծ քանակութեամբ անկուրի այս ծառից:

№ 23. Բէօնէ Դիլ (Բ.-սքանչելի)—Beurre Diel. (B. magnifique). Սեպտեմբեր—դեկտեմբեր: Ուշ-աշնան ազանդերի (դեստերտի) տեսակիցն է: Պտուղը աչքի է ընկնում իր մեծութեամբ: Ծառն աճում է զօրեղ և վաղ է սկսում պտուղ տալ:

№ 38. Բէօնէ Հատդի—Beurré Hardy. Գարուն: Սեղանի և վաճառքի տանձ է: Ծառն աչքի է ընկնում զօրեղ աճեցողութեամբ: Պտուղը պէտք է քաղել հասնելուց մի-հինգ օր առաջ:

№ 15. Բէօնէ Բլումենբախ—Մարտիկ-երկրագործ—Beurré de Blumenpach. Soldat laporeur. Սեպտեմբեր—նոյեմբեր: Միջին մեծութեան սեղանի ընտիր տանձ է: Ծառն ամուր է և պտղաբեր: Երբէք չթողնել, որ պտուղը հասնի ծառի վրայ, այլ քաղել, հէնց որ դեղնել է սկսում: Այս տեսակն արժի որ մշակուի:

№ 22. Բէօնէ Կլերօ—Benrré Clairgeau. Նոյեմբեր—դեկտեմբեր: Սա շատ լաւ տանձերիցն է, որի համար էլ լաւ գին են տալիս: Ծառը թոյլ է աճում:


№ 9. Երէցատանձ—De Curé. Pastorenbirne. Նոյեմբեր—դեկտեմբեր. Արդիւնաբերական առաջնակարգ տեսակիցն է և շատ պտղաբեր: Լաւ է դիմանում հեռու ճամբորդութեան և լաւ է պահվում պակած գրութեամբ: Մակային հիւանդութիւնից չի նեղվում: Ծառն աչքի է ընկնում հաստատ ու զօրեղ աճեցողութեամբ, հողի վերաբերմամբ պահանջուտ չէ. պտուղ է տալիս կանոնաւոր և անչափ առատ:

№ 30. Ժեներալ Տօտլըբէն—Général Tottleben. Նոյեմբեր—դեկտեմբեր: Շատ մեծ, սեղանի լաւ տանձ է: Ծառը միջին ոյժի տէր է: Շատ և առատ է պտղաբերում: Մշակելու արժանի տեսակիցն է: Առանձնապէս խոշոր պտուղ են տալիս որմայեց ծառերը:

№ 24. Ժողուայնի յաղթանակ—Triomphe de Jodoigne. Հոկտեմբեր—դեկտեմբեր: Զպէտք է թողնել, որ պտուղը ծառի վրայ երկար մնայ: Ծառն աճում է զօրեղ կերպով, մշակելու արժանի տեսակիցն է:

№ 1. Կատիլակ—Catillac. Նոյեմբեր—մայիս: Տնային գործածութեան համար շատ լաւ է: Ծառն աչքի է ընկնում զօրեղ աճեցողութեամբ: Հեռու ճամբորդութեան շատ լաւ է դիմանում:

№ 5. Կարմիր դոյէնատանձ—Doyenné rouge. Սեղանի և պահածոյքի (կօսակովի) համար ամենալաւ տանձերիցն է:



№ 26. Կարմի սիտրոն—Citron de Carmes. Հասնում է յուլիսին: Բերրի տեսակիցն է:

№ 7. Կոլոմայի Բէօնէ—Beurré du Coloma. Urbanistes. Հոկտեմբեր—դեկտեմբեր: Բաւական խոշոր, սեղանի համար լաւ տանձ է: Ծառը շատ էլ զօրեղ չի աճում:

№ 29. Կօնգրէսի յիշատակ—Souvenir du Congrès. Եթէ վաղ քաղուի, երկար կը դիմանայ: Ծառը բաւական զօրեղ կերպով է աճում. շատ բերրի է: Քամիներից պաշտպանուած ակղ է պահանջում:

№ 21. Զմնան դոյէնատանձ—Doyenné d'hiver. Դեկտեմբեր—ապրիլ: Զմնան տանձերի թագուհին է: Որպէսզի պտուղը լիակատար հասնի, պէտք է թողնել, որ երկար մնայ ծառի վրայ: Քաղած պտուղը պէտք է հով կացարաններում պահել: Ծառը լաւ է աճում, վաղ է պտուղ տալիս և շատ առատութեամբ:


№ 17. Զմնան Նելիս—Bonne de Malines. Winter Nelis. (Կովկասում ասում են Սև-Ալազիրի): Նոյեմբեր—

փետրվար: Պտուղը միջին մեծութեան է, երկար է պահվում:

№ 11. Զմնան մխրատանձ—Beurré gris d'hiver. Նոյեմբեր—դեկտեմբեր: Յայտնի տեսակի տանձ է, մրգավաճառները ուրախութեամբ են առնում:

№ 19. Նոր Պուատօ—Nouveau Poiteau. Հոկտեմբեր—նոյեմբեր: Ծառն աճում է զօրեղ կերպով, շատ պտղառատ է: Սերկիւլին պատուաստածը շատ լաւ է յաջողվում:

№ 4. Պաս Կոլմար—Passe Colmar. Regentin. Դեկտեմբեր—փետրվար: Ար-
դիւնաբերական այգիների համար լաւ է: Հեշտութեամբ է դիմանում հետու ճամբոր-
դութեան: Ծառը թոյլ է աճում, բայց վաղ է սկսում պտուղ տալ ու շատ բերրի է:
Սա մշակելու արժանի տեսակիցն է:



№ 13. Սքանչելի տանձ Ծառնէօից—Delices de Charneux. Köstlichste von
Charneux. Հոկտեմբեր—նոյեմբեր: Սեղանի համար շատ լաւ տանձ է: Ծառն աճում է
գորեղ կերպով: Աւելի սիրում է խոնաւ հող:

№ 6. Sommerdorn Tunctirter. Epine d'été punctuée. Սեպտեմբեր—հոկտեմ-
բեր: Սեղանի համար լաւ է: Ծառը վաղ է սկսում պտուղ տալ ու առատ: Սիրում է
խոնաւ վայրերը:

№ 47. Օլիվիէ դը-Սերո—Olivier de Serres. Փետրվար—մարտ: Չմտն լաւ տե-
սակիցն է: Պտուղը քամուց վայր չի ընկնում ծառից:

№ 33. Փրանսիա—La France. Հասնում է հոկտեմբերին և պահվում մինչև դեկ-
տեմբեր: Ծառը գորեղ կերպով չի աճում և չի սիրում բշտելը—ճղները կտրտելը:

№ 18. Փորելինբիրն—Forelenbirne. Նոյեմբեր—յունվար: Պտուղը միջին մե-
ծութեան է. ծառը գորեղ է աճում, պտղառատ է ու վաղ է սկսում պտուղ տալ:

№ 31. Վանդամի տանձ—Wandame. Խոշոր, լաւ տանձ է. դիմանում է հետու
ճամբորդութեան:

№ 28. Վիլլիամս—Ghretien Williams. Աղանդերի (դեստրտի) յայտնի տանձ է:
Արդիւնաբերական տեսակիցն է: Ծառն աչքի է ընկնում առատ պտղաբերութեամբ:
Մշակելու արժանի տեսակիցն է:

Անդրկովկասեան տանձի տեսակներ

- № 52. Ամիան կուլաքի
- » 53. Չմիան »
- » 56. Աշնան »

- № 53. Մեծ Նանազիր.
- » 40. Բելոկանի խոշոր.
- » 41. Սախոլ արմիւղ.

Գաճաճ ձկների համար ՍԵՐԿԵԼԻՆ ՊԱՏՈՒԱՍՏԱԾ ՏԱՆՁԵՆԻՔ: Տան-
ձենին, որ պատուաստած է սերկելի ծառին, թէև աւելի պակաս երկարա-
կեաց է, քան վայրի ծառին պատուաստածը. բայց այդպիսի ծառերի
պտուղները աչքի են ընկնում առանձին խոշորութեամբ ու հիանալի տեսքով:

Միամեայի հատը 30 կ.: Երկամեայինը՝ 40 կ.

Ա մ ո ա ն տ ե ս ա կ ն ե ր

Ստորեւ անուանուած տեսակների նկարագրութիւնը տես վերը:

- Բուժարանում եղած տեսակները. № 2. Բէօրէ Ժիֆառ.
- № 37. Կլապպի սիրական տանձ.
- № 8. Անտառի գեղունի կամ ջրալի տանձ:

Աշնան ու ձմռան տեսակներ

Ստորեւ անուանուածների նկարագրութիւնը տես վերը:

- № 4. Պաս Կարմար.
- » 7. Կօլօմա Բէտէ.
- » 9. Երէցատանձ.
- » 10. Բերնահալ կամ Կոզետանձ.
- » 15. Բէտէ Բլումենըախ.
- » 16. Արդանաօնի կոզետանձ.
- » 17. Չմոան Նելիս.
- » 19. Նոր Պուասո.
- » 20. Ալանսօնի դոյնատանձ.
- » 22. Բէտէ Կլերօ.
- № 23. Բէտէ Դիլ.
- » 24. Ժողումնի յաղթանակ.
- » 25. Անգուլէմի դրսունի.
- » 27. Արանչի սիրուն Լուիզ.
- » 29. Կոնգրէսի յիշատակ.
- » 30. Ժեներալ Տօտլըբէն.
- » 38. Բետէ Հարդի.
- » 46. Մաս Ալեքսանդրին.
- » 47. Օլիվիէ դը-Սեռ:



ՍԱԼՈՐԵՆԻՔ

Միամեայ	ծառերի	հատն	ւրժի	30 կ.
»	»	հարիւրն	»	25 ո.
Երկամեայ	Չեի-ՍՏԱՅԱձ	ծառերի հատն	»	45 կ.
»	»	հարիւրն	»	40 ո.
Երեք-ամեայ	»	հատն	»	50 կ.
»	»	հարիւրն	»	45 ո.

Սալորեանու եւ այուչի ծառերի վրայ պատուաստած սալորի ծառեր

№ 8. Աժէնի սալոր—Prune d'Agen. Օգոստոսի վերջին: Ծառն աճում է գօրեղ կերպով, կանոնաւոր և առատ պտուղ է տալիս: Ենթադրուի այն քանին՝ որ սրա շերը քարձր յատկութիւն ունի, շատ տեղեր ահագին քանակութեամբ է մշակվում:

№ 15. Ալիքուիարի: Օգոստոս—սեպտեմբեր: Պտուղը միջին մեծութեան է, շատ լաւ է չորացնելու համար:

№ 5. Աննա Շպէտ—Anna Spaeth. Օգոստոսի վերջին: Միակերպ պիտանի է թէ սեղանի, թէ՛ չորացնելու եւ թէ՛ թթու դնելու: Ուշ հասնող ամենալաւ տեսակիցն է: Ծառը գօրեղ աճեցողութիւն ունի: Վաղ և շատ առատ է պտուղ տալիս:

№ 30. Անտ Ինպերիալ—Ente Imperiale. Հասնում է օգոստոսին: Պիտանի է սեղանի և չորացնելու համար: Եռկայիում լաւ զին ունի:

№ 3. Բաւի վեհասալոր—Rein claud de Ravay. Օգոստոս: Ծառը զարմանալի պտղաբեր է: Պահածոյքի (կօսերվի), քաղցրուկների և այլ անտեսական պատրաստութիւնների համար հիմնալի է:

№ 23. Բիւլերթալի շուտհասուկ—Fruhe aus Büllerthal. Յուլիս: Ետ լաւ է թէ չորացնելու և թէ այլ պատրաստութիւնների համար: Եռկայի համար առաջնակարգներից է: Սա նրանով է աչքի ընկնում, որ միւսներից երեք շաբաթով առաջ է հասնում:

№ 4. Երեւանի մեծ ալուչա: Ամենախոշոր տեսակն է մեր մշակածը: Այս պտուղան ընդարձակ գործարարութիւն ունի անտեսութեան մէջ: Մեղանում—Անդրկովկասում սրա մշակումը շատ շահաւէտ է:

№ 7. Լուվէնի գեղունի—Belle de Louvain. Ծառը աչքի է ընկնում գօրեղ աճեցողութեամբ և պտղաբերութեամբ: Արժի մշակել:

№ 31. Կանաչ վեհասալոր—Reiene claud verte. Օգոստոս: Արժի մշակել ազանդերի (գեսերտի) համար: Սրա պտուղը հաճութեամբ են գնում քաղցրուկների և պահածոյքի գործարանները:

№ 17. Կարլշտադի ուշհասուկ—Zwetsche späethe von Carlstadt. Սեպտեմբեր: Թարմ պտուղները շատ երկար են պահվում:

№ 13. Կելսի—Kelsey. Օգոստոս: Ճարտնիայից է բերուած. հատը մինչև 100 գրամ է կշռում: Պտուղը լաւ է զիմանում ճամբորդութեան: Ծառը սխում է պտուղ տալ վաղ և շատ առատ:

№ 21. Կուրսէլի նախագահ—President de Courcelles. Սեպտեմբերին է հասնում. շատ ուշ հասնողներից է և շատ խոշոր:

№ 1. Մանուշակ Դիապրէ—Violette Diaprée. Օգոստոս: Գոյնը մանուշակի է, որի համար այսպէս է կոչվում: Ծառը աչքի է ընկնում չափազանց պտղաբերութեամբ, որի համար էլ պտուղները չեն կարողանում բնական մեծութեան հասնել: Ետ լաւ է չորացնելու համար: Արժի բազմացնել:

№ 20. Միրաբէլի թագունի—Reine de Mirabelles. Օգոստոս: Ետ համեղ է: Ծառը գօրեղ կերպով է աճում և աչքի է ընկնում պտղառատութեամբ: Արժի որ շատ աճեցնուի:

№ 18. Սատսումա—Satsuma. Ժարոնիսյից է բերուած: Ծառը աչքի է ընկնում միջին հասակով: Պտուղը շատ համեղ է:

№ 6. Սովորական վնզերուհի—Zwetsche gewönliche Haus. Մեղանում շատ է տարածուած. պիտանի է ամեն տեսակ պատրաստած ձևով. օրինակ՝ չիր, թթու եւ այլն: Ծառը բուսական վաղ է սկսում պտուղ տալ, որ աչքի է ընկնում իր կանոնաւորութեամբ և շատ առատութեամբ:

№ 4. Վաշինգտոն—Waschington. Օգոստոսի վերջին: Հիանալի է թէ սեղանի, թէ տնտեսութեան և թէ շուկայի համար: Անձրեային եղանակին պտուղները չեն ճաքճքվում: Ծառը զօրեղ աճեցողութիւն ունի և աչքի է ընկնում պտղաբերութեամբ:

№ 9. Վատերլո—Waterlo pflaume. Պտուղը համնում է սեպտեմբերի սկզբին և դիմանում է երկար:

№ 2. Վեհասալոր կոմս Ալտան—Graf Althans Reinclaude. Փարթամ տեսակիցն է, ուստի ամենքն են ուզում ունենալ իրանց այգում: Համնում է օգոստոսի վերջին: Մրգավաճառները հաճութեամբ են առնում: Չորացրածը թէ տեսքով և թէ համով լաւ է: Պտուղը թանկագին յատկութիւն ունի, այն է անձրեային եղանակին չի ճաքվում, ինչպէս միւսները: Դիմանում է հետո ճամբորդութեան: Ծառը աճում է զօրեղ կերպով:

Ծ Ի Ր Ա Ն Ի Ծ Ա Ռ Ե Ր

Միամեայ	զօրեղների	հատը	30 կ.
»	»	հարիւրը	25 ո.
Երկամեայ	Չեռ-ՍՏԱՑԱԾՆԵՐԻ	հատը	40 կ.

24. Աղջանաբաղ: Յունիսի վերջին: Երեանի յայտնի տեսակն է. գովելու կարիք չկայ, ամեն կողմով ևս լաւ է:

№ 15 Անանաս—Ananas. Օգոստոս: Պտուղը մեծ է. մշկահամ ունի:

№ 16. Արքայական սպիտակ: Մեծ է, քնքուշ և քաղցր համով:

№ 2. Արքայական ուշնասուկ: Սա ամենալաւ ու շատ պտղաբեր տեսակիցն է:

№ 8. Բրէդի—De Breda. Սա շատ լաւ է պահածոյքի (կօստերովի) համար:

№ 1 Դեղին մեծ—Grosse gelpe. Սեղանի համար շատ լաւ է: Համնում է յուլիսին: Ծուկայի համար լաւ է. արժի բազմացնել:

№ 10. Դեղձանման ծիրան—Pêche de Nensy. Սա արդիւնաբերական մշակման մէջ համարվում է ամենահամեղ, ամենագեղեցիկ ու ամենաշահաւէտ ծիրանը:

№ 17. Կարմրաթուշ—Rothbackige. Շատ պտղատու տեսակիցն է ու լաւ է դիմանում ճամբորդութեան, ուստի սրան էլ կարելի է շուկայի համար ամենայարմար դեսակից համարել:

№ 3. Յիշատակ Ռօբերտսի—Souvenir de Robertsau. Բազմացնելու արժանի ծիրան է: Ծառը շատ պտղառատ է:

№ 9. Շիրազի ծիրան—Abr. de Schyras. Բազմացնելու արժանի տեսակիցն է:

№ Օվերնի փառքը—Gloire d'Auvergne. Բարձր յատկութեան ծիրան է: Ծառը աճում է զօրեղ կերպով և շատ էլ պտղաբեր է:

Դ Ե Ղ Ձ Ի Ծ Ա Ռ Ե Ր

Սովորական դեղձի ծառեր—Persica vulgaris. Mill.

Միամեայ ԼԱՒ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՒ ԶՕՐԵՂՆԵՐԻ մի հատը 25 կողէկ:

Երուրական տեսակներ

№ 27. Ամսդէն—Amsden. Ամերիկայից է: Տապակովի է և շատ հիւթալի: Հասնում է յունիսի վերջին, իսկ երբեմն էլ աւելի վաղ:

№ 12. Կարմիր Մադըլէն—Madeleine rouge. Սրանից համարեա ամեն տեղ կայ. համնում է սեպտեմբերի սկզբին:

№ 11. Մեծ Մինսոն—Grosse Mignonne. Պտուղը շատ մեծ է: Ծառը աչքի է ընկնում առատ պտղաբերութեամբ: Արժի բազմացնել:

№ 21. Շուտհասուկ Ալեքսանդր—Early Alexander. Սրա և Ամսդէնի միջև տարբերութիւն չկայ: Համնում է յուլիսի սկզբում: Շատ համեղներից միւսն է:

№ 25. Չինական դեղձ—Celesto Impero. Չինաստանից է բերուած: Պտուղն իր ձևով նման է կարմիր բազրիջանի և ամուր է լինում կղած ծառին: Պտղաբուծութեամբ պարագոյ մասնաւոր մարդկանց խորհուրդ կը տայինք ծանօթանալ այս ինքնորոյն տեսակի հետ:

№ 10. Ռիվերս շուտհասուկ—Precoce de Rivers. Early Rivers. Համնում է յուլիսի միջերբին:

№ 24. Վենուսի կուրծք—Teton de Venus. Ծնորհիւ այն հանգամանքի՝ որ ուշ է համնում (սեպտեմբերի վերջին), և թէ իր մեծութեան, համեղութեան ու գեղեցկութեան, մեծ չափով են բազմացնում:

Ն ե կ տ ա ր ի կ

№ 39. Պիտմաստոնի նարինջ—Orange de Pitmaston. Անգլիական ծագումն ունի: Լաւ տեսակներից է. հաճելի թթուաշ համ ունի:

Անդրկովկասեան տեսակներ

№ 33. Երեւանի սպիտակ ուշնասուկ: Հսկտեմբերին է համնում: Փարթամ խոշոր տեսակիցն է:

№ 34. Երեւանի դեղին ուշնասուկ: Հսկտեմբերին է համնում. գեղեցիկ, համով ու խոշոր գեղձ է:

№ 31. Խիղիսթաւի ուշնասուկ: Շուկայի համար շատ յարմար ապրանք է. հասնում է սեպտեմբերի վերջին:

№ 32. Խիղիսթաւի սպիտակ ուշնասուկ: Տեղական ամենալաւ տեսակներիցն է. համնում է սեպտեմբերի վերջին:

№ 30. Խիղիսթաւի խոշոր կարմիր շուտնասուկ: Շատ վաղ է համնում ու շատ էլ հիւթալի է:

№ 29. Խիղիսթաւի խոշոր կարմիր ուշնասուկ: Սա շատ նման է № 30-ին, միայն-թէ ուշ է համնում, այն է՝ սեպտեմբերին:


№ 1. Խիղիսթաւի դեղին թաւշանման ուշնասուկ: Շատ հիւթալի է. համնում է սեպտեմբերին:

№ 6. Կովկասի զարդ: Հազուգիւս գեղեցիկ դեղձ է. արժի որ անցնուի:

№ 50. Մաւթլուղի վիթխարի: Զարմանալի խոշոր է: Շուկայի փարթամ տեսակիցն է: Շատ լաւ է պահածոյքի (կոնսերվի) համար:

№ 36. Օրթանալի խոշոր շուտնասուկ: Փարթամ տեսակիցն է. գեղեցիկ է և շատ հիւթալի:

№ 40. Օրթանալի խոշոր սպիտակ ուշնասուկ: Իր գեղեցիկութեան և համի համար մրգավաճառները շատ բարձր են գնահատում:



№ 6. Կովկասի զարդ:

Կ Ե Ռ Ա Ս Ե Ն Ի Փ

Միամեակի հատը 30 կ.

» հարիւրը 25 ո.

Երկամեակի հատը 40 կ.

№ 7. *Բիւտնէրի դեղին կեռաս*—Bigarreau jaune de Büttner. Պտուղը խոշոր է և համով. համուժ է յուլիսին: Ծառն աչքի է ընկնում բերրութեամբ:

№ 25. *Գիւբէնի կարմիր*—Rouge de Cuban. Ծառ մեծ, հիանալի ու գեղեցիկ կեռաս է:

№ 2. *Դենիսէնի դեղին կեռաս*—Bigarreau jaune de Doenissen. Համուժ է յուլիսին: Ծառ լաւ է բաղցրաւենիքի համար, ինչպէս նաև պահածուքի (կօնսերվի) գործարանների համար: Ծառն աճում է գօրիկ կերպով, շատ պտղառատ է և համեմատելով միւս տեսակների հետ նաև երկարակեաց է ու մնում է անփնաս, երբ շուրջը եղածները բոլորովին չորանում-ոչնչանում են:

№ 27. *Դրօգանի դեղին*—Bigarreau jaune de Drogan. Ծառ խոշոր է, գեղեցիկ: Ուղղակի արգինաբերութեան տեսակիցն է և ճամբորդութեան էլ լաւ է զմանում:

№ 26. *Եզնասիրտ*—Coeur de boeuf. Ծառ մեծ է, համեղ: Որպէս շուկայի տեսակ՝ արժի որ տարածուի:

№ 1. *Թաթարի կեռաս*—Bigarreau de Tartarie. Ծառ խոշոր է, գեղեցիկ և համեղ: Ծառը շատ պտղառատ է: Առաջարկվում է մեծ չափով բազմացնելու: Լաւ է ծախվում շուկայում:


№ 13. *Խայտապտուն Նապօլէօն*—Bigarreau Napoleon. Ծառ խոշոր ու համով է. համուժ է յուլիսին: Ծառ արգինաբերական տեսակիցն է:

№ 4. *Մայիսի կարմիր կեռաս*—Cerise de Mai rouge. Որպէս շուտ համուժ կեռաս՝ արժի բազմացնել:

№ 15. *Մայիսի սև կեռաս*—Bigarreau noir de Mai. Պտուղը միջին մեծութեան է. համուժ է շատ վաղ, այն է՝ մայիսի սկզբին: Ծառը լաւ է աճում:

№ 16. *Մեզէլի խայտապտուն*—Bigarreau de Mézel. Խոշոր է. համուժ է յուլիսի վերջին: Ծառը պտղառատ է:

№ 14. *Ոսկեգօծ խայտապտուն*—Bigarreau doré. Մեծ, շատ գեղեցիկ ու համով կեռաս է:



№ 99. Ապրիլ Աղէքսանդր կայսր:

№ 9. Ռամօն Օլիվա—Ramon Oliva. Պտուղը խոշոր է. համուժ է շատ վաղ: Ծառը շատ բերրի է:

№ 6. Սև արծիւ—Aigle noir. Շուկայի համար շատ յարմար է: Համուժ է յուլիսին:

№ 17. Վինկլէրի սպիտակ—Guigne blanche de Winkler. Մեծ, քաղցր և հիւթալի կեռաս է:

№ 10. Յէօշէնի հոկտեմբերեան կեռաս—Zöschener oktoberkirche. Ինքնուրոյն պտուղ է. համուժ է շատ ուշ, ուստի և արժի բազմացնել:

№ 21. Օղեսսայի սև կեռաս—Bigarreau noir d'Odessa. Ծնորհիւ իր գեղեցկութեան և այլ գնահատելի յատկութիւնների, մրգավաճառները հաճութեամբ են առնում սրանից:

№ 3. Օհիօի գեղուհի—Guigne beaute de l'Ohio. Փարթամ, խոշոր ու շատ գեղեցիկ պտուղ է. արժի բազմացնել:

№ 5. Փրօմի սև—Guigne de Fromm. Համուժ է յուլիսին: Ծառը աճում է դօրեղ կերպով և աչքի է ընկնում պտղառատութեամբ:

Ա.ԼՈՒԲԱ.ԼՈՒ ԾԱՌԵՐ

Միամեայ պատուաստի հատն արժէ 30 կ.
Երկամեայ » » » 40 կ.

№ 10. Ամարէլ խոշոր—Amarelle double. Մեծ, կարմիր և հիանալի բալի է:

№ 6. Ամարէլ մեծ—Grosse Amarelle. Արժի որ բազմացնուի:

№ 1. Անգլիական շուտհասուկ—Anglaise hative (royal hative). Ետտ տարածուած արդիւնաբերական տեսակիցն է: Պտուղը համուժ է ծառի վրայ կամացկամաց: Արժի բազմացնել:

№ 9. Գուրէնի պատիւը: Ետտ շուտհասուկ է:

№ 15. Երկարճղիկ:

№ 2. Եւգենիա կայսրուհի—Impératrice Eugénie. Արդիւնաբերական շատ լաւ բալի է. համուժ է մայիսի վերջին:

№ 7. Հորտենզիա թագուհի—Reine Hortense. Սիրուն ու համեղ կեռաս է: Ծառը շատ պտղառատ է: Համուժ է յուլիսի սկզբին:

№ 11. Մեծ Բօրէտ—Grosser Gobet. Լաւ հասած ժամանակ քիչ հուպ տալուց—սեղմելուց կորիզը հեշտութեամբ է դուրս գալիս:

№ 4. Մօնմօրանսի—Montmorency. Համուժ է յունիսի վերջին. առանձնապէս լաւ է քաղցրաւենիքի և տնտեսական այլ պատրաստութիւնների համար: Քաղցրաւիք վաճառողները շատ են առնում սրանից:

№ 13. Շպանկա. Ետտ պիտանի է քաղցրաւենիք պատրաստելու համար:

№ 5. Վլադիմիրկա. Լաւ է քաղցրաւենիքի համար:

№ 3. Օստգէյմի բալի—Ostgeimer Weichsel. Փարթամ ու հիւթալի է: Ծառի վրայ շատ չպէտք է թողնել: Ծառը շատ անպահանջկոտ է հողի վերաբերմամբ:

Ն Շ Ե Ն Ի Ք

Միամեայ գօրեղ պատուաստի հատն արժի 25 կ.

№ 1. Իշխանուհի—Princesse. Կճեպն այնպէս բարակ է, որ մատով հուպ տալուց կտորվում է: Ծառը աչքի է ընկնում բերրիութեամբ. ուստի արժի որ մեծ չափով բազմացնուի:

№ 4. Մուղակեան ջուլիտակ: Ետտ հեռաբքիւր է հէնց միայն հրա համար, որ ամեն մի պտուղը ջուլիտ միջակով է:

Ս Ե Ր Կ Ե Ի Լ Ի Ք

Միամեայ գօրեղ պատուաստի հատն արժի 30 կ.
Երկամեայ » » » » 40 կ.

Տեղական տեսակներ

№ 8. Խոշոր Նաբաթ. Խոշոր է շատ. սիրուն ձևով է ու լաւ համ ունի: Առանձնապէս լաւ է քաղցրաւենիքի, կճեպը շաքարապատելու (ցուկատ) և այլ պատրաստութիւնների համար:



Սերկեիլ № 8. Խոշոր Նաբաթ:

№ 5. Մալաչինա. Խոշոր, համով ու հոտով յայտնի տեսակիցն է:

№ 5. Օրթանալի օմոն. Խոշոր տեսակիցն է. մրգավաճառները գնահատում են երկար զիմանալու համար:

ՏԿՈՂՆԻՔ (տխիլի ծառեր)

Լաւ տեսակի հատի գինը 30 կ. է:

ԱՐՔԱՅԱՄՈՐԵՆԻՔ

Rubus Idaeus

Տասը հատն արժի	80 կոպէկ.
Հարիւրն »	7 ուրլի:

Surpasse Faatolf. Ամենալաւ տեսակներից է. համուտ է յունիսին: Պտուղը շատ խոշոր է և աչքի է ընկնում իր քաղցրութեամբ: Շատ լաւ է թէ սեղանի և թէ այլ պատրաստութիւնների համար:



Queen Victoria. Անգլիական լաւ տեսակներից մինն է: Պտուղը խոշոր է. համեղ է սկսում յուլիսին և պտուղ է տալիս մինչև ցրտերն ընկնիլը: Սրա թփերը շատ զօրեղ կերպով են աճում:

Perpetuel de Pillard. Արգինաբերական ընտիր տեսակից է. պտուղը մեծ-մեծ, հիւթալից և հոտոտ է: Եփուելուց համը չի կորցնում: Թուփը չափազանց պտղառատ պտուղ է տալիս մինչև սաստիկ ցրտերն ընկնելը:

Brinkles Orange. Ամերիկայից է բերուած: Սեղանի համար առաջնակարգ տեսակիցն է. համուտ է յունիսին: Զօրեղ կերպով է աճում:

ՀԱՂԱՐՃԵՆԻ

Հատն արժի 20 կոպէկ:

Բուծարանը ծախու է հանում շուկայում գին ունեցող միայն անգլիական խոշոր պտուղ տուողները:

№ 40. Green Willow. Պտուղը շատ մեծ-մեծ ու գեղեցիկ է:

№ 4. Ինդուստրի—Whinams Industry. Փարթամ տեսակից է. պիտանի մեծ չափով բազմացնելու: Թուփը զօրեղ է և բերրի:

- № 21. Duckwing. Խոշոր պտուղներ ունի. լաւ տեսակիցն է:
- № 25. Green Gage. Կանաչ պտուղներ ունի. շատ լաւ տեսակիցն է:
- № 2. Columbus. Դեղին ու հարթ:
- № 3. Smiling Beautu. Կանաչ ու հարթ:
- № 5. Green River. Կանաչ ու հարթ:
- № 6. Iolly Printer. Կարմիր ու հարթ:
- № 7. Duc of Bedford. Կանաչ ու հարթ է, շատ խոշոր և շատ բերրի:
- № 15. Freecost. Խոշոր է, կանաչ, կլոր ու աղուամազով:
- № 16. Dublin. Խոշոր է, կանաչ ու կլոր:
- № 19. Keen's Seedling. Կարմիր է, կլոր ու քաղցր:
- № 22. Lord Douglas. Դեղնականաչ ու երկարաւուն:
- № 23. Defiance. Կարմիր է, հարթ ու կլոր:
- № 24. Jolly Farmer: Կանաչադեղին ու հարթ:
- № 31. Profit. Կանաչ է, ձուածկ ու հարթ:
- № 33. Golden Gourd. Դեղին է, կլոր ու հարթ:
- № 35. Victoria. Կարմիր ու կլոր:
- № 44. Lord Saffild. Կլոր ու հարթ:
- № 51. Non-plus-ultra. Գերազանց տեսակից:

ՍԵՒ-ՀԱՂԱՐՃԵՆԻ (դարադար)

Չօրեղների մի հատն արժի . . . 20 կ.

Ծախու է հանվում միայն խոշոր պտղատուները, այն է՝ սեւ, կարմիր ու սպիտակ հաղարձնիքը:

Ջ Ա Մ Բ Ի Ի Ղ Ա Յ Ո Ւ Ո Ւ Ռ Ե Ն Ի Ք

Ստորև ցոյց տուած տեսակների կտրտած ճիւղտները առանձնապէս պիտանի են՝ զամբիւղներ գործելու, այգու կահ-կարասիք շինելու և վաղերն ու միւս բոյսերը կապելու համար:

Հարիւր հատն արժի 1 ուրլի
 Հազարը » » 8 »

Salix Lambertina
» Caspica.

Salix purpurea
» vitilina.

Ծ Ա Ռ Ե Ր Ո Ւ Թ Փ Ե Ր

ԹԱՓՈՒՈՂ ՏԵՐԵՆՆԵՐՈՂ

Որդան-տերեւի ծառը, Morus alba 100 հատը 5 ս.
 Սպիտակ ալացիա » » 8 ս.

Կենդանի ցանկապատերի համար բոյսեր

(Mactura aurantica)

Հարիւրը՝ 5 ուրլի:

Մեղանում—կովկասում այս թուփը պէտք է համարել իսկական անթափանց կենդանի ցանկապատ շինելու համար ամենալաւ թուփը:

Վ ա թ դ ե ն ի ք

Ընտրովի թէյաձարողների ու ամնտկան վարդերի տեսակի

Թոսին արժի . . . 30 կոպէկ:

Փ Ղ ա տ ե թ ե ռ ծ ա ո

Biota orientalis Endl. Փարթամ կիսածառ է, որ Անդրկովկասի չոր վայրերի համար մեծ նշանակութիւն ունի: Ամեն տեսակ հողում ևս լաւ է աճում: Միակերպ պիտանի է թէ առանձնակի անկելու և թէ կենդանի ցանկապատեր շինելու համար: 1/4 արշ. բարձրութեամբը արժէ 10 կ., 1/2 արշ.—20 կ., 1 1/2 արշ.—60 կ. հատը:

ԹՈՁ (Oidium): Սազողին շատ վնասներ է հասցնում նաև Օլողիում կոչուած հիււանդութիւնը, որ կովկասում յայտնի է թոզ անուանով (վրացերէն նացարի): Այս հիււանդութիւնից գլխաւորապէս վնասվում են խաղողի հատիկները: Հիւանդութեան նշանները, խաղողը ծածկվում է մոխրաման փոշիով, որ հեազհետէ սևանում է: Այդ փոշիով թեթեակի ծածկվում են նաև վազան մատներն ու տերեւները և նոյնպէս վերջը սևանում:

Բժշկութիւնը: Թոզը վերացնելու ամենալաւ միջոցը ծծմբափոշին է (քիւքիւրտը), որի համար յարմարեցրած փուքսեր կան. իսկ այդ փուքսերից ամենալաւն ու յարմարը Վերմորէլի սօրփիւն է, որ կարելի է միջքին կրել: Ինչ ասել կ'ուզի որ լաւ հետեանքներ ստանալու համար անհրաժեշտ է որ ծծմբափոշին չոր լինի և ամենամաքուր տեսակից: Հարկաւոր ժամանակ այդ փոշուց ածում են փուքսի մէջ և փչում ամբողջ վազան վրայ: Պէտք է ուշ դարձնել, որ խաղողը հաւասար կերպով ծածկուի փոշիով, և ոչ մի տեղ չկիրտուի—չհաւաքուի: Եթէ ծծմբափոշին խոնաւացած լինի, պէտք է զեռարեւի տակ չորացնել և յետոյ ածել Վերմորէլի սօրփիւն—փուքսի մէջ և փչել չոր ու պարզ եղանակին: Պէտք է ծծմբափոշին փչել տարէնը 3 անգամ, իսկ հարկաւոր գէպքում 4 անգամ, հետեւալ ժամանակներում:

- I. Ծաղկած ժամանակ (իսկ ուր թոզ շատ կայ, նաև ծաղկելուց առաջ).
- II. Առաջին փչելուց 3—4 շաբաթ յետոյ.
- III. Այգեկութից—խաղողը քաղելուց 1 ամիս առաջ:

Ինչպէս ասուեց վերը, պէտք է փչել անպատճառ չոր ու պարզ եղանակին. բայց եթէ փչելուց յետոյ անմիջապէս անձրև գայ, անհրաժեշտ է որ փչելը կրկնուի: Մէկ դեպքում (1 ¼ օրավար) տարածութեան համար բաւական է 2—3 փութ ծծմբափոշի:

ԽՆՁՈՐՆԵՆՈՒ ՈՐԳՆԵՐ: Այդ որդերն ուտում են ոչ միայն տերեւները, այլև պտուղը: Բժշկութիւն. Այդ որդերի դէմ ևս գործ են ածում վերոյիշեալ Բօրդօի հեղուկը՝ հետը խառնելով 1 ½—2 մսխալ պղնձափոշի (Փարիզի կանաչ): Հէնց-որ երևան այդ որդերը, իսկոյն պէտք է սրսկել: Վերջին սրսկումն կատարվում է խնձորը բաղելուց մի ամիս առաջ:

Այդ տեսակ որդեր պատահում նաև միւս պտղատու ծառերի վրայ: Բժշկութիւնը միևնոյնն է: Օգնում է նաև միմիայն պղնձափոշին—Փարիզի կանաչը՝ առանց Բօրդօի հեղուկի: Մի գոյլ (վերց) ջրի հետ բաւական է խառնել 2 մսխալ պղնձափոշի: (Մանրամասնութիւնը տեսնել վերջը «Միջատների և որդերի տուած վնասները»):

ԼՈՒԻԾ (Листевая тля): Մանր միջատներ են, որոնք ծծում են նորարոյս ճիւղերի հիւթը: Իրանց դէմ գործ են գնում նալթի կամ կարթօլի էմուլսիան, ծխախոտի հիւթը (էքստրակտ): Այս դեղը պատրաստելու համար առաջ զեռ պատրաստում են հետեւալ հիմնական հեղուկը.

Նալթ	6 շիշ.
Տաք ջուր	3 »
Պինգ սապոն	1 գրուամբայ:

Կրակի վրայ եռացող ջրի մէջ հեազհետէ պցում են սապոնի փոքրիկ կտորները. երբ սապոնը բոլորովին լուծվում է, վրան ածում են նալթը՝ արագ-արագ խառնելով 10—15 բոպէի ընթացքում: Պէտք է խառնել աւելով, մանր ճիւղերի կամ պղնձէ թիւլերի կապոցով: Լաւ խառնելուց յետոյ ստացվում է մածնի նման թանձր հեղուկ: Ահա այս հիմնական հեղուկից մէկ շիշ պցում են 10—20 շիշ խմելու ջրի մէջ ու սրսկում լուծից վնասուած ճիւղերի վրայ Այս հեղուկը գործադրելիս չմոռանալ սրիակիչի սեւինի մասերը փոխարինել կաշէ մասերի, որովհետեւ նալթը հալում է սեւինը:

ԺԱՆԳԱՅԻՆ ԲԾԵՐ (ржавчина) են լինում խնձորի տանձի, սերկելի ծառերի տերեւների վրայ:

Նշանները. յունիտին կամ յուլիտին այդ ծառերի տերեւների վրայ նկատվում են կարմրագոյն կամ դեղնագոյն կլոր կէտեր: Ուր այդ կէտերը երևան են գալիս, նոյն տեղը սկսում է հաստանալ: Այդ բանը առանձնապէս նկատելի է լինում տերեւի տակի կողմից, իսկ վերի երեսից այդ տեղերի վրայ գտնվում են բազմաթիւ մանր սև կէտեր: Օգոստոսին կամ սեպտեմբերին տերեւների վրայի ժանգաման կէտերը տերեւի ներքին կողմից բաց դեղնագոյն են դառնում, մեծանում, երկարում ու ստանում են բաժականման ձև: Այս հիւանդութիւնից տերեւները չորանում են և վայր թափվում: Այս հիւանդութիւնը գլխաւորապէս ցրդեանուց է փոխանցվում:

Բժշկումն: Պէտք է Բօրդօի հեղուկ—պղնձարջասպ սրսկել հիւանդ մասերի վրայ գարնան սկզբից մի անգամ, ամառը միքանի անգամ, իսկ աշնանը անպատճառ ժողովել հիւանդացած տերեւները և կրակ տալ-ոչնչացնել:

ՍՊԻՏԱԿ ԲԾԵՐ տանձենու տերեւի վրայ: Այս հիւանդութիւնը շատ է տարածուած: Նշանները. տանձենու տերեւների վրայ երևան են գալիս բաց-մոխրագոյն կէտեր, որի շրջագիծը մեխակագոյն է լինում: Այդ կէտերը մեծ քանակութեամբ են առաջանում, որոնցից տերեւները անժամանակ չորանալուց թափվում են:

Բժշկումն: Պէտք է սրսկել հիւանդ մասերի վրայ Բօրդօի հեղուկ—պղնձարջասպ գարնան սկզբից մի անգամ, ամառը միքանի անգամ:

ԱԼԻԻՐԱՆՄԱՆ ԹՈՁ: Խնձորենու տերեւները, երբեմն էլ ամբողջ ճիւղերը ծածկվում են սպիտակ սարդարին թողով, որոնց մէջ դնդաւակ—քորոցի գլխի չափ սև գնդակներ են նկատվում:

Բժշկումն: Պէտք է հիւանդ ծառի վրայ փչել ծծմբափոշի (քիւքիւրտ) գարնան սկզբից մի անգամ, ամառը միքանի անգամ:

ԲՈՍ—ԲՈՐ տանձի ու խնձորի ծառերի վրայ: Աչքի առաջ ունենալով որ մեր կողմերում շատ է տարածուած այս հիւանդութիւնը, որից պտուղները բոլորովին անկողմերում շատ է տարածուած այս հիւանդութիւնը, որից պտուղները բոլորովին անկողմերում են, անհրաժեշտ է որ առանձնապէս ուշադրութիւն դարձնուի այդ հիւանդութեան վրայ: Այդ հիւանդութիւնը շատ վտանգաւոր է մանաւանդ տանձենու համար: Նշանները. պտուղների վրայ գոյանում են բարակ, բրդոտ ու սև-կանաչագոյն կէտեր, որոնց գտնուած տեղերը ճաքվում—ճեղքվում են մանաւանդ տանձը և այգալիսով պտուղները գործածելու համար անպէտքացնում են: Ճիշտ է տանձի պէս խնձորը չի ճաքում, պտուղները գործածելու համար անպէտքացնում են: Նոյն բանն է պատաբայց դարձեալ գոյացած վէրքերը պտուղը անպէտքացնում են: Նոյն բանն է պատահում նաև այդ ծառերի տերեւների ու ճիւղերի հետ, որոնց վրայ՝ կէտերը գտնուած տեղերում ճեղքուածներ են բացվում մանաւանդ արեգակի կողմից:

Բժշկումն: Աշնանը պէտք է բոլոր տերեւները պոկոտել, հաւաքել մի տեղ ու կրակ տալ-ոչնչացնել. ապա ձմեռը և գարնան հէնց սկզբից Բօրդօի հեղուկ սրսկել ծառին, իսկ ամառը միքանի անգամ կատարել այդ սրսկումն:

ՓՏՈՒՄՆ: Վերջին ժամանակներս այս հիւանդութիւնը չափից դուրս շատ է տարածուել կովկասում և անազին վնասներ է հասնում՝ փտեցնելով խնձորը, սերկելիլը, բաժուել կովկասում և անազին վնասներ է հասնում՝ պտուղները սկսում են փտել: Միջուկը ծիրանը: Նշանները. հասած կամ կիսահաս պտուղները սկսում են փտել: Միջուկը փտել սկսելով՝ դառնում է մեխակագոյն, իսկ պտուղի արտաքին մակերևոյթը ծածկվում է մանր կէտերով կամ երկար բծերով: Այդ կէտերի գոյնը կամ սպիտակ է լինում կամ պղտոր-դեղնագոյն: Հիւանդ խնձորի գոյնը երբեմն մութ փայլուն սևագոյն է լինում, որ կոչվում է սև-փտումն:

Բժշկումն: Հէնց-որ այդ հիւանդութիւնը նկատուի, հիւանդ պտուղներն իսկոյն պէտք է պոկոտել ծառից և այրել-ոչնչացնել և կամ շատ խորը թաղել, թէև աւելի նպատակայարմար է անմիջապէս այրել, որ իսպառ ոչնչանայ, որովհետեւ այդ հիւան-

դուրբիւնը չափազանց վարակիչ յատկութիւն ունի: Այդ հիւանդութիւնը երևան եկած ատալին տարին վարակուած պտուղների պոկոտելը պէտք է կատարել ամեն օր և անպատճառ այրել. աշնան ու միւս գարնանը մինչև աչքերի բացուելը մի-մի անգամ, իսկ ամառը 2—4 անգամ պէտք է սրսկել վերը նկարագրած Բօրդօի հեղուկով:

ՏԵՐԵԻՆՆԵՐԻ ԿՈՒՉ ԳՍԼԸ դեղձի և սալորի ծառերի վրայ: Այս հիւանդութիւնը շատ է տարածուած, իսկ երբեմն էլ սրա շնորհիւ տարուայ բերքը բոլորովին ոչնչանում է: Նշանները. տերեւների վերին մակերևոյթի վրայ զանազան ձևի ու մեծութեան ուռուցքներ են գոյանում, որոնք բաց-կանաչագոյն, վարդագոյն, կարմրամիսակագոյն և նոյնիսկ սևագոյն են լինում: Այդ հիւանդութիւնը երևան գալուան պէս տերեւներն սկսում են ծրմուռել ու կուչ գալ. իսկ տերեւի ներքին կողմը ծածկվում է մի տեսակ սպիտակ հիւթով:

Բժշկումն: Առաջին տարին վնասուած տերեւները պէտք է պոկոտել և այրել-ոչընչացնել ու 2 անգամ Բօրդօի հեղուկ սրսկել և 2 անգամ էլ ծծմբափոշի փչել. իսկ հետեւի տարին՝ մինչև տերեւների երևան գալը սրսկել ամբողջ ծառը 3 անգամ՝ աւելի խիստ (թունդ) պատրաստուած Բօրդօի հեղուկով:

Միջատների և որդերի տուած վնասները

Բացի կովկասում տարածուած վերոյիշեալ հիւանդութիւններից պակաս վնաս չեն հասցնում նաև զանազան միջատներն ու թրթուռները: Այսպէս օրինակ՝ ճիճուակեր խնձորը, ինչպէս յայտնի է, փչանում է որդից, որ ծակելով խնձորը, անպէտք է դարձնում ուտելու և ծախելու համար, որի դէմ պէտք է կռուել, որպէսզի ատալն առնուի:

Բժշկումն: Մովորական Բօրդօի հեղուկի հետ խառնում են պղնձափոշի (Փարիզի զի կանաչ) այն է՝ 20 գոյլ (վեդրօ) հեղուկի հետ խառնում են 1/2 կամ 3/4 գրուանքայ պղնձափոշի և այդ խառնորդ հեղուկով միջանի անգամ սրսկում հիւանդ ծառերը: Սրսկելու ամենալաւ ժամանակը ծաղկի թերերը թափուելու միջոցին է: Առաջին սրբակումից 10 օր անցած՝ նորից պէտք է սրսկել. իսկ եթէ էլի երևան այդ որդերը, կրկին սրսկել. յամենայն դէպս վերջին սրսկումը պէտք է լինի ոչ-ուշ, քան պտուղը հաւաքելուց մի ամիս առաջ:

Նոյնպիսի մեծ վնասներ են հասցնում խնձորենու պտղաբերութեան ՄՈՒՆ կոչուած միջատները, որոնք ուտում—խծում են ծառի տերեւները:

Բժշկումն: Վերցնել մէկ գրուանաքայ պղնձափոշի (Փարիզի կանաչ), հետը խառնել մի-քիչ բաղբրաւենի—զլիցերին ու լաւ ձեծել կամ արորել: Յետոյ այդ զանգուածը խառնել 40 գոյլ (վեդրօ) ջրի հետ, լաւ խառնխառնել ու սրսկել, հէնց-որ միջատները երևան գան: Եթէ կարիք լինի մի վերջին սրսկումն ևս, այդ պէտք է կատարուի ոչ-ուշ, քան պտուղը քաղելուց մի ամիս առաջ:

ԲՈՅՍԵՐԸ ԲԺՇԿԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐ

Հեղուկները սրսկելու գործիքներ


Բոյսերը բժշկելու համար շատ տեսակ գործիքներ ու մթերքներ կան ծախու հանուած, սակայն հիմնուելով մեր սեպհական բազմամտայ փորձի և հեղինակաւոր անձանց գրաւոր կարծիքների վրայ, մենք կ'առաջարկենք մեր գիւղատնտեսներին՝ կղածներէրց ամենալաւերը, նպատակայարմարներն ու ձեռնտուները: Դրանք են.

ՎԵՐՄՕՐԷԼԻ ՍՐՍԿԻՉՆԵՐԸ

ՍՐՍԿԻՉՆԵՐԸ

(пульверизаторы) ծառայում են վազերն ու պաղատու ծառերը բժշկելու և ազատելու զանազան սնկային ու այլ հիւանդութիւններից և թէ վնասակար միջատներից: Սրսկիչներից ամենալաւը համարվում է ՎԵՐՄՕՐԷԼԻ ԷԿԻՐ N° 1-նը, որ իր պարզ կազմութեամբ, ամրութեամբ և նպատակայարմար հրաշալի ԼէՐ N° 1-նը, որ իր պարզ կազմութեամբ, ամրութեամբ և նպատակայարմար հրաշալի աշխատանքով իրաւամբ համարվում է աշխարհիս երեսին կղածներից ամենալաւը: Եւ զրա համաշխարհային համբաւն էր պատճառ, որ բազմաթիւ գործարանատէրեր կամեւնալով օգտուել զրանից, սկսեցին՝ արտաբրուատ ԷԿԻՐ N° 1-ի նման սրսկիչներ պատրաստել և ծախել Վերմօրէլի ԷԿԻՐ անունով: Չսխալուելու համար անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել հետեւեալ նշանների վրայ.

Նախ՝ իսկական Վերմօրէլի ԷԿԻՐը պէտք է նման լինի նկար 1. երկրորդ՝ գործիքի վրայ պէտք է լինեն նկար 2-ի նման կողքից գրաւորը—զուրս ընկած տառերով հետեւեալ գիրը. Vermorel Bte S. G. D. G. Villefranche (Rhône). Նոյնը պէտք է լինի նաև կափարիչի վրայ (նկար 3):



Նկար 1. ԷԿԻՐ N° 1, սովորական N° 26 ցնցուղով:



Նկար 2.




Նկար 3.

Ամեն մի գործիք ծախվում է արկղիկով, որի մէջ պէտք է գտնուի՝ գործիքն ամբողջապէս, լծակը, սրսկիչը, բանալին, որի միւս ծայրը ծառայում է որպէս նաև պլուտտակը դարձնող, մի պղնձէ խողովակ, որի մի ծայրին հագցրած է սրսկիչը, իսկ

միւս ծայրին ամրացրած է ծորակը, մի ուսինի խողովակ, որի մի ծայրին հազցրած պէտք է լինի մի փոքրիկ մետաղեայ խողովակ ականջներով և պտուտակներով, մի սպառ թերթ՝ գործիքը մաքրելու, մաս-մաս բաժանելու և նորից սարքելու համար ցուցմունքներով, և վերջապէս մի պրակ—բրոշուր՝ «Բժշկութեան համառոտ ձեռնարկ» (Краткое наставление способа лѣчения):

ՎԵՐՄՈՐԷԼԻ ԿՐԿՆԱԿԻ ՍՐԱԿԻԶԸ


ԷԿԼԷՐ № 1 ԿՐԿՆԱԿԻ № 27 ՍՐԱԿԻԶՈՎ, նրկար 4-րդը կազմութեամբ նոյնն է, ինչ-որ վերոյիշեալը, միայն-թէ սա ծայրին ունի՝ սովորական № 26-րդ կոչուած մի սրակիչի փոխարէն № 27-րդ կոչուած կրկնակի սրակիչներ, ինչպէս որ պարզ երևում է նկար 4-րդից, որոնցով աշխատանքը կրկնակի արագ է կատարվում:



Նկար 4. Էկլէր № 1 կրկնակի № 27 ցնցուղով:

ՀՆԴԿԱՆՂԷԳԻ (ԲԱՄԲՈՒԿԻ) ՓԱՅՏԵՐ

Ծառերը և առհասարակ միւս բարձր բուսերը բժշկելու համար ևս գործ են դնում Վերմորէլի Էկլէր № 1 սրակիչը, որի վրայ՝ փոխանակ սովորական կարճլիկ ցնցուղների միացնում են հնդկեղէգի վրայ (նկար 5) ամրացրած սրակիչ:




Նկար 5. Հնդկեղէգի օգնութեամբ աշխատելիս:

Այդ կերպի սրակիչը հնափայտը ծառայում է որպէս յենարան սրակիչի, որի մետաղեայ խողովակը ամրացրած է այդ փայտի վրայ, իսկ միւս ծայրին ծորակ ունի, որին միացնում են սովորական Էկլէր № 1-ի հետ: Սրա № 26 ցնցուղի փոխարէն կարելի է ունենալ նաև № 27 կրկնակի ցնցուղը: Հնդկեղէգի փայտերը զանազան երկարութեան են լինում, այն է՝ 2 մետր (2 արշին 13 վերշ.) 3 մետր (4 արշ. 3 վերշ.) 4 մետր (5 արշ. 10 վ.) և 5 մետր (7 արշ. 1 վերշ.) երկարութեամբ: Երեք և աւելի մետրից երկարները բաղկացած են լինում 2 մասից, որոնց հազցնում են միմեանց վրայ և կամ, թէ պէտքը չկայ և շատ երկար է, առանձին-առանձին են բանացնում: Երկու մասից բաղկացած լինեն այն առաւելութիւն ունի, որ հեշտ ու յարմար է հետուսեղ ուղարկելը:

Վերոյիշեալ գործիքների որեւէ մասնիկը եթէ կորչի, մաշուի կամ փշանայ, ուզած ժամանակ կարելի է ձեռք բերել նորը:

ԾՇՄԲԱՓՈՇԻ (ՔԻԻՔԻԻՐՏ) ՓԶԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ Վերմորէլի տորփիլը

ՎԵՐՄՈՐԷԼԻ ՏՕՐՓԻԼ: Վազների թոզ (օրդիում—Oidium) կոչուած հիւանդութեան դէմ ձմեռափոշի ցանելու համար ամենալաւ գործիքը համարվում է Վերմորէլի տորփիլը (նկար 6), որի կազմութիւնը մասնագէտների կարծիքով հասցրած է ամենաբարձր կատարելութեան: Տօրփիլը № 1-ի աշխատանքի քանակութիւնը՝ սովորական փելը անգամ աւելի է, հետևապէս մշակափութեան վեց անգամ պակաս է նստում: Բացի նրավարձն էլ վեց անգամ աշխատանքը լաւ է կատարվում, այլև նից որ դրանով աշխատանքը լաւ է կատարվում, յայն ժամանակի ահագին խնայողութիւն է լինում. որովհետև գործիքի մէջ միանգամով 25 գրուանքայ ձմեռափոշի ածելով, մշակը այլևս ժամանակ չի կորցնում՝ նորից ձմեռափոշի վերցնելու համար ստիպուած չի լինում աշխատանքը շուտ-շուտ դադարեցնել:




Նկար 6. Վերմորէլի տորփիլ № 1.

Բացի դրանից բանուորը պաշտպանուած է ձմեռափոշուց: Գործիքը քանդակն ու նորից կազմելը կատարվում է շատ հեշտութեամբ: Բարարանչիւր տորփիլի հետ լինում է առանձին բացատրիչ թերթիկներ: Ամեն մի կոտրած, փշացած կամ մաշուած մասը կարելի է նորից առանձնակի ձեռք բերել: Տօրփիլները լինում են 2 տեսակ. № 1 մեծ և № 2 փոքր:

ՓՈՒՔՍԵՐ

ՓՈՒՔՍԵՐԸ ևս ծառայում են ձմեռափոշի փշելու համար: Իրանք լինում են երկու տեսակ. «Հաւերն» (havergne) հասարակ կազմութեամբ (նկար 7) և «Ռոլլըր» (Regulateur—նկար 8), որով հնար է լինում թափուող ձմեռափոշու քանակութիւնը աւելացնել կամ պակասացնել:



Նկար 7. Սովորական փութք: Նկար 8. Հասարակացիւր փութք:

ԲԺՇԿԵԼՈՒ ՄՐԵՐՔՆԵՐ

Պղնձարչասայ կամ կապոյտ քար

ՄԱՐՈՒՐ ՊՂՆՁԱՐՉԱՍՊ կամ ԿՍՊՈՅՏ ԲԱՐ մեղանից կարելի է ստանալ ամենալաւ յայտնի և ամենալաւ գործարանների պարտաստածը, օրինակ՝ Մակլեսֆիլդի կիվերպուլում (Maklesfield Liverpool) և այլն: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի պղնձարչասայի կամ կապոյտ քարի մաքրութիւնը:

Թիւնն ու ազնուութիւնը, այդ բանի մէջ համոզվում է ամեն մէկը հէնց առաջին փորձից յետոյ: Սակայն աչքի առաջ ունենալով այն բազմաթիւ կեղծումները, որ գործ են դնում կապոյտ բարի վերաբերմամբ, խորհուրդ ենք տալիս զգոյշ լինել և միայն գնել յայտնի և վստահութեան արժանի գործարանների սպրանքից:

ԹՈՐՈՒԱԾ—ՊԱՐՋԵՅՐԱԾ ԾԾՄԲԱՓՈՇԻ

Ծծմբափոշին լինում է երկու տեսակ, այն է՝ ծեծած—մանրացրած և թորուած—պարզացրած գրութեամբ: Առաջինը—մանրացրածը իտալական սովորական հում ծծումբն է, իսկ երկրորդը—թորուած ծծումբը կամ իսկական ծծմբափոշին ստացվում է ծծումբի թորելուց, այսինքն կազմվում է ծծմբի գալորշիներից: Թորուած ծծմբափոշին իբրև աւելի մանր և մաքուր ծծումբ աւելի լաւ է նստում տերեւների վրայ և աւելի ազդում, քան մանրացրած—երկանքով աղածը: Սակայն այդ երկու տեսակի ծծումբը ևս նման են իրար, ուստի պէտք է զգուշանալ և երկանքով աղածը թորուածի տեղ չդնել: Իսկ շատ յաճախ էլ թորուած ծծումբի տեղ ծախու են հանում զանազան փոշիների խառնուրդներով ծծումբ, ինչպէս օրինակ՝ եպիպոտացորենի (սիմինդրի) ալիւր, վեզուվի մոխիր կայլն, որոնք բժշկական որևէ յատկութիւն չունեն, հետևապէս այդ միանգամայն վստահութեան արժանի ծծումբը պէտք է համարել Մարսէյի Բուզի գործարանի պատրաստած ծծումբը (A. Boude & fils Marseille).

Մեր գրասենեակից կարելի է ստանալ թէ՛ Մարսէյի Բուզի գործարանի վերոյիշեալ ծծմբափոշին և թէ՛ իտալական յայտնի գործարաններին:

ՓԱՐԻՉԻ ԿԱՄ ՇՎԷՅՖՈՒՐՏԻ ՄԱՔՈՒՐ ԿԱՆԱՉ

ՓԱՐԻՉԻ ԿԱՄ ՇՎԷՅՖՈՒՐՏԻ ՄԱՔՈՒՐ ԿԱՆԱՉ (պղնձափոշի): Մեր գրասենեակում ծախվում է միմիայն Լօնդօնի ամենայայտնի Բլենդէլ (Blundel) գործարանի ամենաբարձր յատկութեան Փարիզի կանաչը: (Գործածութեան եղանակը տեսնել վերը): Այս փոշին ևս առնելիս պէտք է զգուշանալ կեղծումներից:

ՎԵՐԳԻՆ ԵՒՕՏՐ ԷԿՍԵԼՍԻՕՐ

„Verdet neutre Excelsior“ ՓՈՇԻՆ գործ է զրվում որթապիտակի (միլդիւ) և առհասարակ միւս սնկային հիւանդութիւնների դէմ հետեւալ կերպով. վերցնում են 2 գրուանքայ փոշի, 8 գոյլ (վեզրօ) ջրի հետ լաւ խառնում և դեղն արդէն պատրաստ է:

ԷԿԼԵՐ ՓՈՇԻ

ԷԿԼԵՐ ՓՈՇԻ — „Bouillie Eclair“ կամ պատրաստի Բօրդօի հեղուկ: Ինչպէս վերը ասացինք (տես բժշկումների մասին) այս փոշին լիովին փոխարինում է Բօրդօի հեղուկին, որի պատրաստելը առանձին աշխատանք ու փորձ է պահանջում. մինչդեռ

այս փոշու մի փաթեթը (2 1/2 գրուանքայ) բաւական է լաւ խառնել 8 գոյլ ջրի հետ և Բօրդօի հեղուկը պատրաստ է:

Մանր այգետէրերի համար, որոնք չգիտեն լաւ պատրաստել Բօրդօի հեղուկը, էկլէր փոշին անփոխարինելի է, ինչպէս նաև այն տեղերի համար, ուր չի կարելի ո՞՞ մաքուր կիր դնել և ոչ ըստ ըր յատկութեան պղնձարջասպ—կապոյտ քար:

Ծ Խ Ա. Խ Ո Տ Ի Հ Ի Ի Թ Ը


Որպէս թոյն գործ է զրվում բոյսերի վրայի վնասակար միջատները ոչնչացնելու համար: Սրա մի փութը խառնում են 150 գոյլ (վեզրօ) ջրի հետ և սրսկիչով շաղ տալիս—ցանում—սրսկում միջատների վրայ: Անասնապահութեան համար ևս օգտակար է ծխախոտի հիւթը, որ գործ են դնում ոչխարի և առհասարակ ընտանի կենդանիների զանազան հիւանդութիւնների (քորի, քոսի, սլիլի, լուի և կաշու սովորական հիւանդութիւնների) դէմ: Անասունների բժշկելու համար վերցնում են այդ հիւթից մի փութ և խառնում 50 գոյլ ջրի հետ:

ԳԻԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՓԱՐՈՍ «ՄԵԳՈՒՉԱ»

ԳԻԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՓԱՐՈՍ «ՄԵԳՈՒՉԱ» գործ է զրվում գիշերային թիթեռնիկները ոչնչացնելու համար լոյսի օգնութեամբ: Թէ ինչքան վնասներ են տալիս խաղողին գիշերային թիթեռները, այդ բանը շատ լաւ յայտնի է ամեն մի այգեւորի: Թիթեռներին ոչնչացնելու համար գոյութիւն ունեցող միջոցներից միակն ու գործի: Թիթեռներին ոչնչացնելու համար գոյութիւն ունեցող միջոցներից միակն ու գործի: Թիթեռները թռչում գալիս են և թափվում փարոսի շրջանակում գտնուող նաւթախառն ջրի մէջ ու սաստկոտում:

Փարոսը մաքուր և ելքաորական լոյսի նման լոյս է արձակում: Վառվում է կարբիդով: «Մեգուզա» փարոսի մի ժամ վառուելը նստում է 1—1 1/2 կոպէկ. իսկ մի դեռտեսանի (1 1/4 օրավարի) համար բաւական է չորս փարոսը: Փարոսը կարելի է գործածել նաև այլ պէտքերի համար, ինչպէս օրինակ՝ բակերը լուսաւորելու հայլն:






ԳԵԼԱՐԱՆՆԵՐ—ՃՈՒՐ-ՄԱՐԶԻՆՆԵՐ (presse)

Խաղողի շէշը (ջէջան) քամելու համար (նկար 9) աշխարհահռչակ Մարիի և Մարմոնէի գործարանի ԳԵԼԱՐԱՆ—ճՈՒՐՄԱՐ:


Նկար 9. Գեղարան:

ՃՄՂԻՉ — ԱՆԿԱՆՆԵՐ (Фуляръ Эграпуаръ)

Նոյն Մարիի և Մարմոնէի գործարանի խաղող ճմլելու և միաժամանակ քնթեռները — խաղողի կոթերը զատելու — ջոկելու գործիք:



Նկար 10. Ճմլիչ—անկաններ:




Նկար 11. զինեհան:

ԳԻՆԵՀԱՆՆԵՐ (ПОМПЫ)

Յայտնի ԳԻԼԲՅԻ գործարանի զինեհան մեքենաները (նկար 11)՝ զինին մէկ ամանից միւսն անցնելու համար:


Թէ սովորական և թէ անկէզ քարի (ազբետի) փոշիով մաքրելու համար զանազան տեսակի և մեծութեան ԳԻՆՈՒ ՔԱՄԻՉՆԵՐ

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ




Նկար 12. Պղան խփելու գործիք:

Ամեն տեսակի եւ մեծութեան գործիքներ՝ խցան խփելու, կապսիւլներ ամրացնելու եւ այլն:




Նկար 13. Ազբետի փորձիչ՝ զինի քամելու համար:

ՍԱԼԵՐՈՆԻ-ԳԻՒԺԱՐԻԻՆԻ ԳԻՆԻ ՀԵՏԱԶՕՏԵԼՈՒ ԲՈՒՄ
ԳՈՐԾԻՔՆԵՐԸ



Նկար 14. Խնձոր կճպելու և շկարտելու գործիք:



Նկար 15. Դեղձ կճպելու գործիք:

Դեղձ, խնձոր, տանձ և այլն ԿՃՊԵԼՈՒ և
ԿՏՐՏԵԼՈՒ զանազան գործիքներ:


ՊՏՈՒՂՆԵՐ ԶՈՐԱՑՆԵ-
ԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխարհահռչակ

Հեյգենհեյլի


Վաագի գործարանի

գործիքներ:



Նկար 16. Պտուղներ չորացնելու գորակներ:

ԳՈՒԹԱՆՆԵՐ ԵՒ ՓԻՐԻԶՆԵՐ



Նկար 17. Գուլթան:

ԵՐԿԱԹԵԱՅ
ԹԵԼԵՐ (լարեր)
և այլ լարերը ձգելու
գործիքներ:



Նկար 18. Պատուաստի դանակ:



Նկար 19. Կտրոց:

Պատուաստելու և առհասարակ գիւղատնտեսական
պանակներ, կտրոցներ ու մկրատներ:



Նկար 20. Պտուղ քաղելու հեշտ և յարմար գործիք:

ՄԱԴԱԳԱՍԿԱՐԻ ԿԱՊԻՉԸ (ռաֆիա)

պատուաստները, ծառերը, մատները կապելու

համար ամենաընտիր նիւթ է:

Գիւղատնտեսութեան և գինեգործութեան վերաբերեալ մանր պիտոյքներ:

Բացի վերոյիշեալներից, գրասենեակը յանձն է առնում հայթայթել նաեւ այն ամենը, ինչ-որ պէտք է առհասարակ մատանների ու խաղողի տնտեսութեան, ինչպէս նաեւ այգեբուծութեան և գիւղատնտեսութեան համար:

Տեղեկութիւններ ստանալ ցանկացողները՝ խնդրում ենք, թող գրաւոր դիմեն Թիֆլիզ՝ Մ. Ե. ՓՐԻԴՈՆԵԱՆԻՆ. Սերգիեվսկայա, № 11.

—ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՁՐԻ Է ՂՐԿՎՈՒՄ—

Ըստ պահանջման բուժարանը ուղարկում է նոր քրօշիւք ոտանքէն լւզուով:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՇՈՒՑՆԱՍՈՒԿ ԴԵՂՁԵՐ

Գինն է՝ մանապարհածախսով 60 կ.

Առանց » 50 կ.



19907